Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15241

Lohnarbeit und Kapital von Karl Marx.

Ռուսատանի Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցութիւն

Կ. ՄԱՐՔՍ

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԿԱՊԻՏԱԼ

Առանձին արտատպութիւն «Neue Rheinische Zeitung»-ից
Խմբագրութեամբ Ֆրիդրիխ Էնգելսի

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՑ
Բ. Ի.

ԺՔՍԵԻ
Կուսակց. Տպարան, Rue de la Coulouvrenière, 27.
1904

Lohnarbeit und Kapital von Karl Marx.

Ռուսատանի Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցությունն

Պրոլետարներ՝ բոլոր երկրների՝ միացեք!

Կ. ՄԱՐՔՍ

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԿԱՊԻՏԱԼ

Առանձին արտատպություն «Neue Rheinische Zeitung»-ից
Ներածությամբ Ֆրիդրիխ Էնգելսի

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐԻՑ
Բ. Ի.

ԺԸՍԵՒ
Կուսակց. Տպարան, Rue de la Coulouvrenière, 27.
1904

15241

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այս աշխատութիւնը լոյս է տեսել 1849 թ. ապրիլի 4-ից սկսած «Neue Rheinische Zeitung»-ի մէջ՝ մի շարք առաջնորդող յօդուածներով։ Դրա հիմքը կազմում են այն դասախօսութիւնները, որոնց Մարքսը 1847 թ. դասախօսել է Բրիւսելի գերմանական բանւորների ընկերութեան ժողովներում։ Արտատպութեան մէջ այդ աշխատութիւնը մնացել է հատուկտոր ձեւով։ Նոյն թերթի № 269-ի մէջ զետեղած յօդուածի վերջին գրած՝ «կը շարունակուի»-ն մնում է անկատար, որովհետեւ ժամանակակից ազմկայոյզ դէպքերը — օրինակ ռուսների յարձակումը Յունգարիայի վրայ մի շարք ապստամբութիւններ՝ Դրեզդէնում, Իզերլօնում, Էլբերֆելդում, Պֆալցում եւ Բադենում — խանգարեցին թերթի հրատարակութիւնը (1840 թ. մայիսի 15-ին)։ Իսկ շարունակութեան ձեռագիրը չի գտնուել Մարքսի թողած գրաւոր փշրանքների մէջ։

«Վարձու Աշխատանք եւ Կապիտալ» աշխատութիւնը լոյս է տեսել բրոշիւրի ձեւով մի քանի հրատարակութեամբ, որպէս առանձին արտատպութիւն. վերջին անգամ՝ 1884 թ. Ցիւրիխում, Հոտինգի չվեյցարական ընկերակցութեան տպարանում։ Մինչեւ այժմ կատարած արտատպութիւնները պարունակում էին օրիգինալի իսկական բովանդակութիւնը։ Իսկ այս նոր արտատպութիւնը պէտք է, որպէս պրոպագանդայի միջոց, ոչ պակաս քան 10,000 օրինակներով տարածել, եւ այդ պատճառով ինձ համար հարց է ծագում, արտ-

դէմ՞ք այժմեան պայմաններում ինքը՝ Մարքսը, արժանի կհամարէր նոյն պարունակութեան անփոփոխ հրատարակութիւնը։

Բառասնեակներին Մարքսը դեռ չէր աւարտել իւր քաղաքատնտեսութեան կրիտիկան — այդ կատարեալ է միայն յիսունեակների վերջերին։ Այդ պատճառով իւր «Քաղաքատնտեսութեան Քննադատութեան Մասին» (1859 թ.) վերնագրով գրքից առաջ լոյս տեսած աշխատութիւնները խուսափում էին մասնաւոր կէտերում 1859 թուականից ի վեր հեղինակածից. նրանք պարունակում էին այնպիսի արտայայտութիւններ եւ ամբողջ հատուածներ, որ ապագայ հեղինակութիւնների տեսակէտից՝ թիւրեւ սխալ էին երեւում։ Բսահինքեան հասկանալի է, որ սովորական, ընդհանուր հասարակութեան համար որոշած հրատարակութիւնների շարքում՝ սա եւս, հեղինակի մտաւոր զարգացման տեսակէտից, իւր արժանի տեղն ունի, որ հեղինակը, ինչպէս եւ հասարակութիւնը, անվիճելի իրաւունք ունեն՝ այս հին գրութիւնների անփոփոխ արտատպութեան վերաբերմամբ։ Եւ ես չէի երազել մի խօսք անգամ փոփոխելու։

Ուրիշ բան է սակայն, երբ նոր հրատարակութիւնը բացառապէս որոշուած է բանւորների մէջ պրօպագանդա անելու համար։ Այդ դէպքում Մարքսը անպայման կուզէներ հին, 1849 թ. հեղինակածը համաձայնեցնել իւր նոր տեսակէտի հետ։ Եւ ես ինձ իրաւացի եմ զգում նոյն մտքով վարուելու, երբ ես այս հրատարակութեան համար ձեռնարկում եմ փոքր ինչ փոփոխութիւնների եւ յաւելումների, որոնց կարիք է զգացւում, առաջադրած նպատակին ընդհանուր առմամբ հասնելու համար։ Ուրեմն ընթերցողին նախօրօք յայտնում եմ. սա ոչ թէ այն գրքոյկն է, որ Մարքսը գրել է 1849 թ. այլ մօտաւորապէս նա, ինչպէս Մարքսը կգրէր 1891

թուականին։ Իսկական բնագիրը այնքան է տարածուել բազմաթիւ օրինակներով, որ այս առայժմ բաւական է, մինչեւ որ ես մի ապագայ ընդհանուր հրատարակութեան մէջ նա կրկին անփոփոխ կը հրատարակեմ։

Իմ բոլոր փոփոխութիւնները պատում են մի կէտի շուրջը։ Ըստ օրիգինալի բանւորը ծախում է իւր աշխատանքը կապիտալիստի վրայ՝ աշխատավարձի համար, իսկ ըստ ներկայ բնագրի նա ծախում է իւր աշխատանքի ոյժը։ Եւ ես պարտաւոր եմ այդ փոփոխութեան համար բացատրութիւն տալու։ Բացատրութիւն բանւորների համար, որպէսզի նրանք տեսնեն, թէ դա բառախաղութիւն չէ, այլ քաղաքատնտեսութեան ամենակարեւոր կէտերից մէկը։ Բացատրութիւն բուրժուաների համար, որպէսզի նրանք տեսնեն, թէ ո՛ր աստիճան՝ անկեղծ բանւորները — գերակշռում են մեր քիթը ցեղ «կրթուածներից», որոնց համար այդ տեսակ բարդ խնդիրները անլուծելի են մնում իրենց ամբողջ կեանքում։

Կլասիքական քաղաքատնտեսութիւնը ընդունել է ինդուստրիայի գործնական կեանքից գործարանատիրոջ այն սովորական պատկերացումը, գաղափարը, որ իբր նա գնում եւ վճարում է բանւորի աշխատանքը։ Այդ պատկերացումը զեղեցիկ կերպով բաւարարութիւն էր տալիս գործարանատիրոջ՝ իւր ռեւանշական ձեռնարկութեան, հաշուապահութեան եւ գների հաշիւների համար։ Եւ այդ հանգամանքը պարզամիտ կերպով փոխադրուելով քաղաքատնտեսութեան մէջ, առաջ է բերում զարմանալի սխալներ ու չփոխուելիներ։

Ինքը՝ տնտեսութիւնը, դուռ այն իրողութիւնը, որ բոլոր ապրանքների գները, դրանց շարքում եւ ա՛յն ապրանքի գինը, որ «աշխատանք» է կոչւում, շարունակ փոփոխւում են. որ նրանք բարձրանում եւ ընկնում են չնորհիւ այն բազմատեսակ պայմանների,

որոնք յաճախ ապրանքների արտադրութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն, այնպէս որ թւում էր, որ գները սովորաբար զուտ պատահականութեամբ էին որոշւում։ Սակայն, հէնց որ տնտեսութիւնը հանդէս եկաւ որպէս գիտութիւն, այն ժամանակ նրա առաջին խնդիրներից մէկը եղաւ՝ գտնել այն օրէնքը, որ իբր թէ թագնւած է ապրանքների գների տիրապետող պատահականութեան յետեւ։ Մինչդեռ ըստ իրողութեան նա ինքն էր տիրապետում այդ պատահականութեան։ Այդ գիտութիւնը որոնեց շարունակ դէպի բարձր ուցածը տատանւող եւ երերւող ապրանքների գների ընթացքում մի կենտրոնական կէտ, որի շուրջը կատարւում են այդ տատանումներն ու երերումները։ Մի խօսքով քաղաքատնտեսութիւնը դուրս եկաւ ապրանքների գների տատանից, որպէսզի որոնէ ապրանքների արժէքը, որպէս նրանց ղեկավարող օրէնք, որով բացատրւում են գների բոլոր տատանումները եւ որի վրայ բացառապէս նրանք բոլորը վերածւում են։

Կլասիքական քաղաքատնտեսութիւնը գտաւ, որ որեւէ ապրանքի արժէքը որոշւում է նրա մէջ մարմնացած, նրա արտադրութեան համար պահանջւող աշխատանքով։ Նա բաւականանում էր այս բացատրութեամբ։ Մենք եւս կարող ենք առայժմ դրա վրայ կանգ առնել։ Սակայն թիւրիմացութիւններից խուսափելու համար, հարկ եմ համարում յիշել, որ այդ բացատրութիւնը այսօր կատարելապէս անբաւարար է դարձել։ Առաջին անգամ Մարքսն է հիմնաւոր կերպով հետազօտել աշխատանքի՝ արժէք կազմաւորող յատկութիւնը, եւ գտել, որ որեւէ ապրանքի արտադրութեան համար գործադրւող ոչ իւրաքանչիւր՝ ըստ երեւոյթին կամ անգամ իսկական անհրաժեշտ աշխատանք է, որ բոլոր պայմաններում տալիս է այդ ապրանքին արժէքի այնպիսի մեծութիւն, որ համապատասխան լինի գործա-

գրւած աշխատանքի քանակին։ Երբ, ուրեմն, այսօր կարճ կերպով արտայայտում ենք տնտեսագէտ Բիկարդոյի առածը՝ որ մի ապրանքի արժէքը որոշւում է նրա արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքով, միշտ աչքի առաջ ունենք միեւնոյն ժամանակ Մարքսի արած վերապահումը։ Այդքանը բաւական է այստեղ։ Մնացածը կարելի է ընդարձակ կերպով գտնել Մարքսի «Քաղաքատնտեսութեան Քննադատութեան Մասին» գրքում 1859 թ. եւ «Կապիտալի» առաջին հատորում։

Հէնց որ տնտեսագէտները արժէքի այս որոշումը՝ աշխատանքի միջոցով, գործածեցին և՛ ապրանք «աշխատանքի» վրայ, այն ժամանակ նրանք ընկան մի հակասութիւնից միւսի մէջ։ Ի՞նչպէս պիտի «աշխատանքի» արժէքը որոշէր։ Նրա մէջ գտնւած անհրաժեշտ աշխատանքով։ Սակայն ո՞րքան աշխատանք է գտնւում մի բանւորի աշխատանքի մէջ՝ մի օրւայ, շաբաթւայ, ամսւայ եւ տարւայ աշխատանք։ Եթէ աշխատանքը միակ չափն է համարւում բոլոր արժէքների, այն ժամանակ կարող ենք «աշխատանքի արժէքը» արտայայտել միայն աշխատանքով։ Սակայն մենք բացարձակապէս ոչինչ չ՝գիտենք մի ժամւայ աշխատանքի արժէքի մասին, թէեւ մենք միայն գիտենք, որ նա հաւասար է մի ժամւայ աշխատանքի։ Ուրեմն դրանով մենք մաղչափ անգամ չ՝մօտեցանք նպատակին։ մենք պտոյտ ենք տալիս միեւնոյն շրջանակի մէջ։

Կլասիք քաղաքատնտեսութիւնը փորձեց նոյնը մի այլ դարձւածքով։ Նա ասաց, որ մի ապրանքի արժէքը հաւասար է նրա արդիւնաբերութեան ծախքերին (die Productionskosten)։ Բայց որո՞նք են աշխատանքի արդիւնաբերութեան ծախքերը։ Այս հարցին պատասխանելու համար, տնտեսագէտները բռնադատւած են իրենց լոգիկային փոքր ինչ զօր տալու։ Փոխանակ

աշխատանքի արդիւնաբերութեան ծախքերը որոնելու, որ դժբախտաբար անկարելի է գտնել, նրանք հետաքննեցին ցոյց տալու՝ որո՛նք են բանուորի արդիւնաբերութեան ծախքերը։ Իսկ սա գտնել կարելի է ի հարկէ։ Այդ ծախքերը փոփոխւում են անշուշտ ըստ ժամանակի եւ պայմանների։ Սակայն հասարակական մի որոշ դրութեան համար, որոշ միջնավայրում եւ արդիւնաբերութեան որոշ ճիւղի մէջ նրանք յայտնի են, գոնէ բաւական նեղ սահմանների մէջ։ Մենք ապրում ենք այսօր կապիտալիստական արդիւնաբերութեան տիրապետութեան ներքոյ, ուր ազգաբնակութեան մի մեծ ու մշտապէս աճող դասակարգ միայն ապրել կարող է, եթէ նա արդիւնաբերական միջոցների — գործիքներ, մեքենաներ, հում նիւթեր եւ կենսական պիտոյքներ — տէրերի համար աշխատէ՝ աշխատավարձի գնով։ Այդ արդիւնաբերութեան եղանակի հիման վրայ բանուորի արդիւնաբերութեան ծախքերը կայանում են այն կենսական պիտոյքների կամ — նրանց փողային գնի — գումարի մէջ, որոնք միջին թւով հարկաւոր են բանուորին աշխատանքի ընդունակ դարձնելու, աշխատանքի ընդունակ պահելու, եւ նրան, իւր քայքայման դէպքում՝ ծերութեամբ, հիւանդութեամբ կամ մահով փոխարինելու մի այլ բանուորով. այսինքն բանուոր դասակարգին կարեւոր սասկութեամբ աճեցնել։ Ընդունենք օրինակի համար, որ այդ կենսական պիտոյքների փողային գինը կազմում է միջին թւով օրեկան 3 մարկ[1]։

Մեր բանուորը ստանում է ուրեմն իրեն զբաղեցրնող կապիտալիստից օրեկան 3 մարկի օրավարձ։ Կապիտալիստը պայմանաւորւում է բանուորի հետ օրեկան

[1]) Մարկ — գերմանական դրամ = ռուսական 46-47 կոպէկին։ Մ. Թ.

12 ժամ աշխատանքով։ Եւ իրաւ, կապիտալիստը հաշւում է այդ հետեւեալ կերպով։

Ենթադրենք, որ մեր բանուորը մեքենայագործ լինելով, աշխատում եւ օրեկան պատրաստում է մեքենայի մի կտոր։ Հում նիւթը — երկաթ եւ պղինձ, հարկաւոր նախապատրաստական ձեւի մէջ — արժէ 20 մարկ։ Շոգեմեքենայի վրայ գործածած ածուխը եւ նոյն շոգեմեքենայի պատուաւոր ճախարակի ու մնացած գործիքների — որոնցով մեր բանուորը աշխատում է — մաշումը արժէ մի օրւայ ընթացքում ենթադրենք, 1 մարկ։ Մի օրվայ աշխատավարձը կազմում է՝ ըստ մեր ընդունելութեան, 3 մարկ։ Ուրեմն մեքենայի որոշ կտորի վրայ ծախսածը կազմում է ընդամենը 24 մարկ։ Բայց կապիտալիստը հաշւում է, որ ինքը սրա համար ստանում է միջին թւով 27 մարկ, ուրեմն 3 մարկ աւելի՝ իւր արած ծախսերից։

Ո՞ւրանից է ծագում 3 մարկը, որ կապիտալիստը իւր գրպանն է խոթում։ Կրաւիք քաղաքատնտեսութիւնը պնդում է, որ ապրանքները վաճառւում են միջին թւով ըստ իրենց արժէքի, այսինքն ըստ այն գների, որոնք համապատասխանում են այդ ապրանքների պարունակած անհրաժեշտ աշխատանքի քանակին։ Մեր մեքենայի կտորի գինը՝ միջին թւով — 27 մարկ — պէտք է ուրեմն հաւասար լինի նրա արժէքին, հաւասար՝ նրա մէջ մարմնացած աշխատանքին։ Սակայն այդ 27 մարկից 21 մարկը արդէն պատրաստի արժէք էր, նախ քան մեքենայագործը աշխատել է սկսում։ 20 մարկ՝ հում նիւթի համար, 1 մարկ ածուխի — որ աշխատանքի ժամանակ այրւել է — եւ մեքենաների ու գործիքների մաշելու համար, որոնք այդ ժամանակ գործ են ածւել եւ ըստ այդ արժէքի մեծութեան՝ բարակել ու կորցրել են իրենց արդիւնաբերելու ոյժը։ Մնում է ուրեմն 6 մարկ, որ աւելացրել

է հում նիւթի արժէքին։ Այս 6 մարկը կարող է միայն, ըստ մեր տնտեսագէտների ընդունելութեան, ծագել՝ մեր բանուորի միջոցով հում նիւթին աւելացրած աշխատանքից։ Եւ այդ տեսակէտից նրա 12 ժամուայ աշխատանքը ձեռք է բերել 6 մարկի մի նոր արժէք։ Ուրեմն բանուորի 12 ժամուայ աշխատանքի արժէքը հաւասար կլինէր 6 մարկի։ Եւ դրանով արդէն գտած կը լինենք վերջապէս, թէ ո՞րն է «աշխատանքի արժէքը»։

— «Կանգնի՛ր այդ տեղ, գոչում է մեքենայագործը։ 6 մա՞րկ, ես խօ միայն 3 մարկ եմ ստացել։ Իմ կապիտալիստը երդւում է բոլոր սուրբերով, որ 12 ժամուայ աշխատանքը միայն 3 մարկի արժէք ունի, եւ երբ ես 6 մարկ եմ պահանջում, նա ծիծաղում է ինձ վրայ։ Ի՞նչ է նշանակում այս»։

Եթէ փոքր ինչ առաջ, աշխատանքի արժէքը որոշելու ժամանակ՝ ընկանք մի անելանելի թակարդի մէջ, այժմ արդէն մենք ընկանք մի բոլորովին անլուծելի հակասութեան մէջ։ Մենք որոնում էինք աշխատանքի արժէքը եւ գտանք աւելի, քան մենք կարիք ունէինք։ Բանուորի համար 12 ժամուայ աշխատանքը 3 մարկի արժէք ունի, իսկ կապիտալիստի համար 6 մարկի, որից նա 3 մարկը վճարում է բանուորին, որպէս վանձ, իսկ 3-ը ինքը իւր գրպանը խոթում։ Ուրեմն աշխատանքը ունեցել է ոչ թէ մէկ, այլ երկու արժէք։

Այս հակասութիւնը դեռ աւելի անհեթեթ պատկեր կստանայ, եթէ մենք փողով արտայայտած արժէքը վերածենք աշխատանքի ժամանակի։ 12 ժամուայ աշխատանքի ընթացքում ձեռք է բերում մի նոր՝ 3 մարկի արժէք։ Հետեւապէս 6 ժամուայ ընթացքում 3 մարկ — մի գումար, որ բանուորը ստանում է 12 ժամուայ աշխատանքի համար։ 12 ժամուայ աշխատանքի համար բանուորը ստանում է՝ որպէս համապատասխան արժէք, 6 ժամուայ աշխատանքի արդիւնքը։ Ուրեմն կամ աշ-

խատանքը երկու տեսակ արժէք ունի, որոնցից մէկը մեծ է, քան միւսը, կամ թէ չէ 12-ը հաւասար է 6-ի։ Երկու դէպքումն էլ առաջ է գալիս մի աչք ծակող անհեթեթութիւն։

Մենք կարող ենք պատել ու չբջել, ինչպէս ուզում ենք, բայց երբէք չենք դուրս գալ այս հակասութիւնից, քանի մենք չարունակ խօսենք աշխատանքի գնման ու վաճառման եւ աշխատանքի արժէքի մասին։ Եւ այսպէս էլ անում էին քաղաքատնտեսները։ Կլասիք քաղաքատնտեսութեան վերջին շառավիղը՝ Բիկարդոյի դպրոցը, խորտակւեց, զարնւելով մեծ մասամբ այս անլուծելի հակասութեան ժայռերին։ Կլասիք քաղաքատնտեսութիւնը մեխւել էր մի լաբիւրինթոսի մէջ։ Այն մարդը, որ գտաւ այդ լաբիւրինթոսից դուրս ելնելու ճանապարհը, եղաւ Կարլ Մարքսը։

Ինչ որ քաղաքատնտեսութիւնը «աշխատանքի» արդիւնաբերութեան ծախքեր էին համարում, արդիւնաբերութեան ծախքեր էր ոչ թէ աշխատանքի, այլ իրեն՝ կինդանի բանուորի համար։ Եւ ինչ որ կապիտալիստի վրայ ծախել է՝ աշխատանք չէ եղել։ «Հէնց որ աշխատանքը իրապէս սկսում է», ասում է Մարքսը, «նա այլեւս դադարում է բանուորին պատկանելուց, այլեւս չի կարող նրանից վաճառւել»։ Նա կարող է առ առաւելն իւր ապագայ աշխատանքը վաճառել այսինքն պարտաւորւել՝ այս ինչ որոշ ժամանակին, կատարել որոշ աշխատանք։ Սակայն դրանով վաճառում է բանուորը ոչ թէ աշխատանքը (որ դեռ չկայ պէտք է տեղի ունենայ), այլ նա մի որոշ ժամանակ (օրավարձով) կամ աշխատանքի որոշ ծառայութեան (հատի վարձատրութեամբ) դպատակով դնում է իւր աշխատանքի ոյժը որոշ վճարի դնով կապիտալիստի տրամադրութեան տակ։ Նա վարձով տալիս է կամ ծախում է իւր աշխատանքի ոյժը։ Բայց այդ աշխատանքի ոյժը

ահել է բանուորի անձնաւորութեան հետ եւ անբաժան է նրանից։ Այդ պատճառով աշխատանքի ոյժի արդիւնաբերութեան ծախքերը միանում են նրա անձի արդիւնաբերութեան ծախքերի հետ։ Ինչ որ տնտեսագէտները աշխատանքի արդիւնաբերութեան ծախքեր էին անուանում, կազմում են բանուորի եւ դրա հետ միասին աշխատանքի ոյժի արդիւնաբերութեան ծախքեր։ Եւ այսպէս, կարող ենք աշխատանքի ոյժի անդիւնաբերութեան ծախքերից անցնել աշխատանքի ոյժի արժէքին եւ որոշել հասարակական-անհրաժեշտ աշխատանքի քանակը, որ կարեւոր է որոշ որակ ունեցող աշխատանքի ոյժ արտադրելու համար, — ինչպէս արել է Մարքսը աշխատանքի գնման եւ վաճառման հատուածում («Կապիտալ», հատոր I, 4 գլուխ, 3 բաժնմունք)։

Ի՞նչ է պատահում այժմ, երբ բանուորը վաճառում է իւր աշխատանքի ոյժը կապիտալիստի վրայ, այսինքն մի նախապայմանաւորուած վարձով — օրւայ կամ հատի վարձով — գնում է նրա արտադրութեան տակ։ Կապիտալիստը առաջնորդում է բանուորին իւր արհեստանոցը կամ գործարանը, ուր գտնւում էին աշխատանքի համար բոլոր կարեւոր առարկաները՝ հում նիւթեր, օժանդակ նիւթեր (ածուխ, գունաւորող նիւթեր եւ այլն), գործիքներ, մեքենաներ։ Այստեղ սկսում է բանուորը իւր աշխատանքը ենթադրենք, նրա օրավարձը կազմում է վերցիշեալ 3 մարկը — այդ դէպքում նշանակութիւն չունի, արդէօ՞ք նա վաստակում է այդ՝ օրւայ թէ հատի վարձով։ Ենթադրենք դարձեալ, որ բանուորը 12 ժամւայ մէջ իւր աշխատանքով աւելացնում է բանեցրած հում նիւթերին մի նոր 6 մարկի արժէք, որին կապիտալիստը իրականացնում է պատրաստ արդիւնքի վաճառման ժամանակ։ Նա վճարում է դրանից բանուորին՝ իւր 3 մարկը, իսկ 3 մարկը ինքն է վերցնում։ Երբ բանուորը 12 ժամւայ

մէջ հայթհայթում է 6 մարկի արժէք, այն ժամանակ 6 ժամւայ մէջ նա վաստակում է 3 մարկի արժէք։ Ուրեմն նա աշխատելով կապիտալիստի համար ընդամենը 6 ժամ, կրկին հայթհայթում է նրա համար իւր օրավարձը պարունակող 3 մարկի մի համապատասխան արժէք։ 6 ժամւայ աշխատանքից յետոյ՝ երկուսն էլ իրարից ազատ են, մէկը միւսին պարտական չի մի գրոշ անգամ։

— Կանգնի՛ր այդտեղ, գոչում է այժմ կապիտալիստը։ Ես վարձել եմ բանուորին մի ամբողջ օրով, 12 ժամւայ համար։ Իսկ 6 ժամը կազմում է միայն կէսօր։ Ուրեմն պէտք է շարունակել միւս 6 ժամը եւս աշխատելու, եւ միայն այն ժամանակ կարող ենք մէկը միւսից ազատ լինել։ Եւ իրաւ, բանուորը հեռանում է իւր՝ «կամաւոր կերպով» կռած պայմանագրութեան, որի համաձայն նա պարտաւոր է մի աշխատանքի արդիւնքի համար, որ աշխատանքի 6 ժամ արժէ, ամբողջ 12 ժամ աշխատելու։

Հատով վարձի դէպքում պատահում է բոլորովին նոյնը։ Ենթադրենք, որ մեր բանուորը 12 ժամւայ ընթացքում հայթհայթում է 12 կոտոր ապրանք։ Դրանցից իւրաքանչիւրի հում նիւթը եւ նրա վրայ բանեցրած գործիքների մաշումը արժեն 2 մարկ, իսկ իւրաքանչիւրը հատը վաճառւում է $2\frac{1}{2}$ մարկով։ Այդպիսով բոլորովին վերցիշեալ պայմանների, պիտի կապիտալիստը բանուորին վճարէ իւրաքանչիւրը հատի համար 25 պֆենիգ[2]), որ 12 հատի համար կազմում է 3 մարկ։ Եւ դա վաստակելու համար բանուորը 12 ժամւայ կարիք ունի։ Կապիտալիստը ստանում է վաճառումից 12 հատի համար 30 մարկ, որից հում նիւթի

---

[2]) 100 պֆենիգը = 1 մարկի։ Երկու պֆենիգը = մօտաւորապէս մի ռուսական կոպէկի։ Ծ. Թ.

եւ մաշած մասերի բաժինը հանելով, մնում է 6 մարկ. դրանից վճարում է նա 3 մարկ, որպէս աշխատանքի վարձ եւ 3 մարկ խոթում իւր գրպանը։ Բոլորովին նոյնը, ինչպէս վերեւ։ Այստեղ եւս բանւորը աշխատում է 6 ժամ իրեն համար, այսինքն իւր վարձի փոխարէնը (12 ժամից իւրաքանչիւրի մէջ ½ ժամ իրեն համար) եւ 6 ժամ կապիտալիստի համար։

Այն կնճռոտ բարդութիւնը, որի մէջ խրւում էին ամենալաւ քաղաքատնտեսներն անգամ՝ քանի նրանք խօսում էին «աշխատանքի» արժէքի մասին, իսկոյն չքանում է, հէնց որ դրա փոխարէն մենք խօսում ենք «աշխատանքի ոյժի» արժէքի մասին։ Մեր արդի կապիտալիստական հասարակութեան մէջ՝ աշխատանքի ոյժը համարւում է մի ապրանք, ինչպէս միւս ապրանքները, սակայն եւ այնպէս մի բոլորովին առանձնայատուկ ապրանք։ Այսինքն նա ունի այն բնորոշ յատկութիւնը, որ նա կազմում է արժէք հայթհայթող ոյժ, արժէքի աղբիւր, եւ իրաւ, յատուկ գործադրութեան դէպքում՝ աւելի մեծ արժէքի աղբիւր, քան ինքն է տիրում։ Այսօրւայ արդիւնաբերութեան շրջանում մարդկային աշխատանքի ոյժը արտադրում է մի օրւայ մէջ ոչ թէ միայն աւելի մեծ արժէք, քան նա ինքն է տիրում եւ ինքն արժէ, այլեւ գիտական-տեխնիկական նորանոր բացումներով եւ գիւտերով բարձրանում է աշխատանքի ոյժի օրւայ արդիւնքի այդ յաւելումը նրա օրւայ արժէքից։ կրճատւում է ուրեմն։ աշխատանքի օրւայ այն մասը, որի մէջ բանւորը աշխատում է իւր օրավարձի փոխարէնը, եւ միւս կողմից երկարում է աշխատանքի օրւայ այն մասը, որի մէջ բանւորը պէտք է ընծայէ իւր աշխատանքը կապիտալիստին, առանց դրա համար վճարելու։

Ահա այսպէս է այսօրւայ ամբողջ հասարակութեան տնտեսական կազմը։ միայն աշխատաւոր դասակարգն է, որ արտադրում է բոլոր արժէքները։ Ինքը՝ արժէքը, աշխատանքի մի այլ արտադրութիւնն է։ այն արտադրութիւնը, որով այժմեան մեր կապիտալիստական հասարակութեան մէջ՝ նշանակւում է մի որոշ ապրանքի մէջ ամփոփւած, հասարակական անհրաժեշտ աշխատանքի քանակը։ Սակայն բանւորների արդիւնաբերած այդ արժէքները չեն պատկանում իրենց, բանւորներին։ Նրանք պատկանում են՝ հում նիւթերի, մեքենաների, գործիքների եւ դրամական կանխիկ միջոցների սեփականատէրերին, միջոցներ, որոնցով նրանք գնում են բանւոր դասակարգի աշխատանքի ոյժը։ Այդպիսով, բանւոր դասակարգը ստանում է իւր արտադրած արդիւնքների ամբողջ քանակի միայն մի մասը։ Եւ միւս մասը, ինչպէս վերեւ տեսանք, որին իւրացնում է կապիտալիստ դասակարգը, եւ որից նա առ առաւելն բաժին է հանում կալւածատէր դասակարգի համար, աւելի է մեծանում, որպէս հետեւանք նորանոր գիւտերի եւ բացումների։ Մինչդեռ բանւոր դասակարգին բաժին ընկած մասը (հաշւելով մարդագլխի վրայ) կամ բարձրանում է շատ դանդաղ ու չընչին կերպով, կամ բոլորովին չի բարձրանում եւ նոյն իսկ ըստ տիրող պայմանների ընկնում է։

Սակայն նոյն այդ մշտական արտադրութեամբ մէկը միւսին մղող ու ընկճող գիւտերն ու բացումները, մարդկային աշխատանքի այդ, մինչեւ այժմ անառելի չափով օրէցօր բարձրացող բեղմնաւորութիւնը, վերջի վերջոյ տեղիք է տալիս մի պայքարի, որի մէջ խորտակւում է արդի կապիտալիստական տնտեսութիւնը։ Մի կողմից անչափ հարստութիւններ, արդիւնքների դիզւած աւելորդութիւն, որը սպառել անհնարին է, իսկ միւս կողմից հասարակութեան մեծ մասը պրոլետարիատ դարձած, վերածւած վարձու բանւորների, եւ հէնց այդ միջոցով անկարող դարձրած արդիւնքների

աւելորդութիւնը իւրացնելու։ Հասարակութեան պա-
սակումը՝ մի կողմից՝ փոքրաթիւ վերին խաւիճանի
հարուստ եւ միւս կողմից՝ մեծ, սեփականազուրկ վարձու
բանուորների դասակարգերի — ներդործում է այնպէս,
որ հասարակութիւնը իւր սեփական արդիւնքների ա-
ւելորդութեան մէջ խեղդուում է, մինչդեռ իւր անդամ-
ների մեծագոյն մասը հաղիւ է պաշտպանուում ամենա-
ծայրահեղ չքաւորութեան հանդէպ։ Այդ դրութիւնը
դառնում է հեղհեղ հակամիտ եւ անդէնք։ Պէտք է
նա վերացնել, նա կարող է վերացնուել։ Հնարաւոր է
հասարակական մի նոր կարգաւորութիւն, ուր անե-
րեւոյթացած լինեն այսօրուայ դասակարգային տարբե-
րութիւնները, եւ ուր — գուցէ մի կարճ ու փոքր,
բայց յամենայն դէպս բարոյապէս շատ օգտակար անց-
ողական շրջանից յետոյ — հասարակութեան բոլոր
անդամների արդէն գոյութիւն ունեցող անգին արտա-
դրող ոյժերի կանոնաւոր շահեցումով եւ յառաջա-
դիմութեամբ, աշխատանքի հաւասար պարտաւորու-
թեամբ, նաեւ կեանքի, կեանքի վայելքի, ֆիզիքական
ու մտաւոր կարողութիւնների բարեկազմութեան եւ
զարգացման միջոցներով՝ հնարաւոր է ընդհանրու-
թեան համար մի համաչափ եւ միատեսակ աճող լիաւա-
ռութիւն վերաստեղծել։ Որ բանուորները հեղհեղ
անընկճելի ոգեւորութեամբ կուում են այդ նոր հա-
սարակական կարգաւորութեան համար, դա թո՛ղ վկա-
յեն, օվկիանոսի երկու կողմերում, մայիսի առաջին
արշալուսող օրը եւ կիրակին, մայիսի երրորդ օրը։

Լոնդոն, 30 ապրիլի, 1891.

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԿԱՊԻՏԱԼ

Զանազան կողմերից մեր երեսով են տալիս, որ մենք չենք պատկերացրել այն անտեսական յարաբերութիւնները, որոնք կազմում են ներկայ դասակարգային եւ ազգային կռիւների նիւթական հիմքը։ Մենք կանոնաւոր կերպով չօշափել ենք այդ յարաբերութիւնները միայն այն դէպքում, ուր նրանք անմիջապէս առաջ են մղել քաղաքական ընդհարումների ժամանակ։

Ամենից առաջ արժէ ամենօրեայ պատմական դէպքերի մէջ հետեւել դասակարգային կռիւն, եւ գոյութիւն ունեցող ու օրէցօր կուտակուող պատմական փաստերի հիման վրայ եմպիրիք եղանակով ապացուցել հետեւեալը, որ բանուոր դասակարգի ընկճումով, ինչպէս այդ տեղի ունեցաւ փետրուար եւ մարտ ամիսներում, յաղթեցին միաժամանակ նրա հակառակորդները — Ֆրանսիայի բուրժուայ հանրապետականները եւ ամբողջ քաղաքացիական եւ գիւղացիական տարրերը, որ Ֆրանսիայի «հանուսա հանրապետութեան» յաղթութիւնը, եղաւ միաժամանակ նշանակալից այն ազգերի համար, որոնք իրենց անկախութեան հերոսական կռիւներով, արձագանք տուին փետրուարեան յեղափոխութեան, որ, վերջապէս, Եւրոպան, յեղափոխական բանուորների պարտութեամբ, կրկնակի կերպով ընկաւ հին տարկուութեան՝ անգլիական-ռուսական ընտրկութեան գերիը։ Փարիզի յունիսեան կռիւը, Վիեննայի դէպքը, Բերլինի արագիկոմիտեան 1848 թ. նոյեմբերին, Լեհաստանի, Իտալիայի եւ Ցունգարիայի յուսահատական ձգտումները, Իրլանդայի սովը — անա

1524/
ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

այն գլխաւոր մօմենտները, որոնք ընդգրկում էին իրենց մէջ եւրոպական դասակարգային կռիւը, բուրժուազիայի եւ բանւոր դասակարգի մէջ։ Եւ դրանց նկատմամբ մենք ցոյց տւինք, որ իւրաքանչիւր յեղափոխական բռնկումն, որքան էլ նրա նպատակը հեռու լինի դասակարգային կռիւից, ապարդիւն պիտի անցնէ, մինչեւ որ չյաղթէ յեղափոխական բանւոր դասակարգը, որ իւրաքանչիւր սոցիալական ըէֆորմ պիտի ուսուցիա համարւի, մինչեւ որ պրոլետարական յեղափոխութիւնը եւ ֆէոդալական հակայեղափոխութիւնը չընդհարւեն իրար հետ մի համաշխարհային կռւի մէջ։ Մեր նկարագրածի, ինչպէս եւ իրականութեան մէջ, Բելգիան եւ Շվէյցարիան ներկայացնում էին ողբերգ-կատակերգական, ծաղրաբանական պատկերներ պատմական մեծ հօրիզոնի վրայ, մէկը, որպէս կաղապար բուրժուական միապետութեան, միւսը, որպէս կաղապար բուրժուական հանրապետութեան։ Տէրութիւններ, որոնք երեւակայում էին ազատ ու անկախ մնալ, ինչպէս դասակարգային կռւից, այնպէս էլ եւրոպական յեղափոխութիւնից։

Այժմ, երբ մեր ընթերցողները տեսան արդէն 1848 թւականի դասակարգային կռիւը, քաղաքական լայն ձեւերի մէջ զարգացած, ժամանակն է խոր թափանցել այն տնտեսական յարաբերութիւնների մէջ, որոնց վրայ կառուցած է՝ ինչպէս բուրժուազիայի եւ նրա դասակարգային տիրապետութեան գոյութիւնը, այնպէս էլ բանւորների տարկութիւնը։

Մենք պիտի երեք բաժանմունքների մէջ ներկայացնենք. 1. Վարձու աշխատանքի յարաբերութիւնը կապիտալի վերաբերմամբ, բանւորի տարկութիւնը, կապիտալիստի տիրապետութիւնը։ 2. Մինչեւ քաղաքացիական դասակարգերի եւ այսպէս անուանած քաղաքացիական դրութեան անխուսափելի խորտակումը՝ այժմեան սիստեմի ներքոյ։ 3. Եւ-

րոպական զանազան ազգերի բուրժուա դասակարգերի առեւտրական ճնշումն ու շահագործութիւնը՝ համաշխարհային վաճառականոցի բռնապետի, Անգլիայի, միջոցով[3]։

Մենք պիտի աշխատենք հնարաւորի չափ պարզ ու ժողովրդական ձեւով ներկայացնել առաջ բերելով նոյնիսկ քաղաքատնտեսութեան տարրական գաղափարները։ Մենք ցանկանում ենք հասկանալի լինել բանւորներին։ Գերմանիայում տիրում է մի տարօրինակ տգիտութիւն եւ գաղափարների չփոթութիւն տնտեսական ամենապարզ յարաբերութիւնների վերաբերմամբ իսկ — սկսած գոյութիւն ունեցող կարգերի առանձնաշնորհ պաշտպանողներից մինչեւ ցած՝ սոցիալիստական հրաշագործ պարադուխները եւ քաղաքական թագնուած հանճարները, որոնցով անդամահատուած Գերմանիան աւելի հարուստ է, քան երկրի իշխանները։

Ուրեմն սկզբում առաջին հարցի մասին։

---

[3]) Ցաւելով պիտի ասել, որ Մարքսի այս ստորաբաժանումներից միայն առաջին մասն է այս գրքոյկի մէջ ընդարձակ շօշափուած. երկրորդ մասից միայն փոքրիկ նմուշներ կարելի է գտնել, իսկ երրորդ մասը ամբողջովին բացակայում է։ Դրա պատճառը բացատրում է Էնգելսը իւր ներածութեան սկզբում (էջ 3)։ Մ. Թ.

Ի՞ՆՉ Է ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ
Ի՞ՆՉՊԷՍ Է ՆԱ ՈՐՈՇՎՈՒՄ

Երբ մէկը հարցնում է բանուորներին. «ո՞ւրքան է Ձեր վարձը», նրանք պատասխանում են. առաջինը՝ «ես ստանում եմ իմ բուրժուայից աշխատանքի օրուայ համար 1 մարկ», երկրորդը՝ «ես ստանում եմ 2 մարկ» եւ այլն։ Ըստ աշխատանքի զանազան ճիւղերի, որոնց նրանք պատկանում են, տրւում է նրանց փողի զանազան գումարներ, որ նրանք ստանում են իրենց բուրժուաներից որոշ աշխատանքի համար — օրինակ մի կանգուն կտաւ գործելու կամ մի ապագրական թերթ շարելու համար։ Հնայելով ստացած վճարների զանազանակերպութեան, այնուամենայնիւ նրանք բոլորը համաձայնւում են մի կէտում. այսինքն՝ աշխատավարձը այն փողի գումարն է, որ կապիտալիստը վճարում է աշխատանքի որոշ ժամանակի կամ որոշ աշխատանքի հայթհայթման համար։

Կապիտալիստը, ըստ երեւոյթին, գնում է փողով բանուորների աշխատանքը, իսկ բանուորները փողի համար ծախում են իրենց աշխատանքը։ Սակայն դա միայն թւում է այդպէս։ Իրողութիւնն այն է, որ նրանք ծախում են փողով կապիտալիստի վրայ իրենց աշխատանքի ոյժը։ Կապիտալիստը գնում է այդ աշխատանքի ոյժը, մի օրով, մի շաբաթով, մի ամսով եւ այլն։ Գրեթէ յետոյ նա գործադրում է այդ աշխատանքի ոյժը, այսինքն նա բանուորներին աշխատել է տալիս պայ-

մանաւորւած ժամանակով։ Կապիտալիստը կարող էր միեւնոյն գումարով — օրինակ 2 մարկով, որով նա գնել է բանուորի աշխատանքի ոյժը — գնել 2 ֆունտ շաքար կամ որեւէ այլ ապրանք։ Այն 2 մարկը, որով նա 2 ֆունտ շաքար է գնում, կազմում է 2 ֆունտ շաքարի գինը։ Եւ այն 2 մարկը, որով նա գնում է աշխատանքի ոյժի 12-ժամեայ գործածութիւնը, կազմում է 12-ժամեայ աշխատանքի գինը։ Ուրեմն աշխատանքի ոյժը մի այնպիսի ապրանք է, ոչ աւելի կամ պակաս, ինչպէս շաքարը։ Առաջինը չափւում է ժամացոյցով, իսկ երկրորդը՝ կշռով։

Բանուորները փոխանակում են իրենց ապրանքը՝ աշխատանքի ոյժը, կապիտալիստի ապրանքով՝ փողով։ Սակայն, այս փոխանակութիւնը կատարւում է մի որոշ յարաբերութեան մէջ։ Այսքան փող՝ աշխատանքի ոյժի այսքան գործածութեան համար։ Ոտաստանագործի 12 ժամեայ հիւսածքի համար 2 մարկ։ Մի՞թէ այդ երկու մարկով չի կարելի գնել շատ ուրիշ ապրանքներ։ Եւ իսկապէս, բանուորը փոխանակել է իւր ապրանքը, աշխատանքի ոյժը, շատ տեսակ ապրանքներով, իրաւ մի որոշ յարաբերութեան մէջ։ Կապիտալիստի տւած երկու մարկը նոյնն է, եթէ նա, որպէս փոխանակութիւն բանուորի օրուայ աշխատանքի, տար նոյնքան միս, հագուստ, փայտ, լուսեղէն եւ այլն։ 2 մարկը արտայայտում է այն յարաբերութիւնը, որի մէջ աշխատանքի ոյժը փոխանակւում է ուրիշ ապրանքներով, այսինքն նա արտայայտում է աշխատանքի ոյժի փոխանակութեան արժէքը։ Իսկ մի ապրանքի փոխանակութեան արժէքը, գնահատւած փողով, կոչւում է այդ ապրանքի գինը։ Ուրեմն աշխատավարձը միայն մի առանձին անուն է աշխատանքի ոյժի գնի համար, որին սովորաբար անւանում են աշխատանքի գին. գին այն առանձնայատուկ ապրանքի, որին ոչ ոք չէ խնամում

ու պահպանում, բայց եթէ մարդկային միտն ու աբիւնը։

Վերցնենք օրինակի համար մի ոստայնագործ բանուոր։ Կապիտալիստը տալիս է նրան ոստայն եւ մանուածք։ Ոստայնագործը սկսում է աշխատել եւ մանուածքից գոյանում է կտաւ։ Կապիտալիստը իւրացնում է կտաւը եւ վաճառում է՝ օրինակ, 20 մարկով։ Այժմ տեսնենք, արդէօ՞ք ոստայնագործի աշխատավարձը մի մասն է կազմում կտաւի 20 մարկի, իւր աշխատանքի արդիւնքի։ Ամենեւին ոչ։ Ոստայնագործը ստացել է իւր աշխատավարձը դեռ վաղուց, նախ քան կտաւի վաճառումը, գուցէ է՛լ աւելի վաղ, նախ քան նրան պատրաստելը։ Կապիտալիստը վճարում է այդ վարձը ոչ թէ այն փողով, որ նա ստանում է կտաւի համար, այլ իւր կանխիկ փողով։ Ինչպէս որ բուրժուայի տւած ոստայնն ու մանուածքը չեն կազմում ոստայնագործի արդիւնքը, այնպէս էլ նրա արդիւնքը չէ այն ապրանքը, որ նա ստանում է իւր սեփական ապրանքի՝ աշխատանքի ոյժի, փոխանակութեամբ։ Կարող էր պատահել, որ բուրժուան ոչ մի գնող չ'գտնէր իւր կտաւի համար։ Կարող էր պատահել, որ նա ինքը չ'կարողանար աշխատավարձը կտաւի վաճառքից կրկին վաստակել։ Կարող էր պատահել, վերջապէս, որ նա վարձի համեմատութեամբ շատ նպաստաւոր գնով է վաճառում։ Այս բոլորը իրեն, ոստայնագործին, ամենեւին չեն վերաբերում։ Կապիտալիստը գնում է իւր արդէն գոյութիւն ունեցող կարողութեան, կապիտալի, մի մասով ոստայնագործի աշխատանքի ոյժը, ճիշտ այնպէս, ինչպէս նա իւր կարողութեան միւս մասով գնել է հում նիւթը — մանուածքը — եւ աշխատանքի գործիքը — ոստայնը։ Այս բոլորը գնելուց յետոյ, որոնց թւին պատկանում է նաեւ՝ կտաւ արդիւնաբերելու համար կարիք զգացող աշխատանքի ոյժը, կապիտալիստը

արդիւնաբերել է տալիս եղած հում նիւթերով եւ աշխատանքի գործիքներով, որոնք միայն իրեն են պատկանում։ Վերջիններիս թւին են պատկանում նաեւ, իհարկէ, մեր բարի ոստայնագործը, որ այնքա՛ն քիչ բաժին ունի այդ արդիւնքից կամ արդիւնքի գնից, որքան ինքը ոստայնը։

Ուրեմն աշխատավարձը չէ կազմում բանուորի անդիւնաբերած ապրանքի բաժինը։ Աշխատավարձը կազմում է արդէն գոյութիւն ունեցող ապրանքի մի մասը, որով կապիտալիստը գնում է արդիւնաբերող աշխատանքի ոյժի մի որոշ քանակ։

Աշխատանքի ոյժը կազմում է, հետեւապէս, մի ապրանք, որին իւր սեփականատէրը՝ վարձու բանուորը, վաճառում է կապիտալիստի վրայ։ Ինչո՞ւ է նա վաճառում այդ։ — Ապրելու համար։

Սակայն աշխատանքի ոյժի գործադրութիւնը՝ աշխատանքը, ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ բանուորի սեփական կեանքի գործունէութիւնը, նրա սեփական կեանքի արտայայտութիւնը։ Եւ նա ծախում է կեանքի այդ գործունէութիւնը մի երրորդի վրայ, որպէսզի դրանով իւր կեանքի կարեւոր միջոցները ապահովէ։ Ուրեմն նա կեանքի գործունէութիւնը միայն մի միջոց է, իւր գոյութիւնը պահպանելու համար։ Նա աշխատում է ապրելու համար։ Նա իւր աշխատանքը կեանք չէ հաշւում. ընդհակառակը՝ աշխատել — նրա համար նրշանակում է զոհել կեանքը։ Այդ աշխատանքը մի ապրանք է, որին բանուորը ծախում է մի երրորդին։ Եւ այդ պատճառով նրա գործունէութեան արդիւնքը չէ կազմում միեւնոյն ժամանակ նրա գործունէութեան նպատակը։ Նա ինքը արդիւնաբերում իրեն համար ո՛չ մետաքսը, որ նա մանում է, ո՛չ ոսկին, որ նա դուրս է հանում լեռնահանքի խորքերից եւ ո՛չ պալատը, որ նա կառուցանում է։ Ինչ որ նա արդիւնաբերում է իրեն համար — դա աշխատավարձն է։ Մետաքսը, ոսկին,

պալատը լուծուում են նրա համար ամենատնտրաժեշտ կենսական պիտոյքների մի որոշ քանակի — գուցէ բամբակեայ ներքնակի, պղնձէ դրամի եւ գեղնանարկ ընակարանի։ Եւ բանուորը, որ ամբողջ 12 ժամ գործում մանում, ծակում, ոլորում, կառուցանում, փորում քարերը կոփում, տանում է եւ այլն — արդէօ՞ք կարելի է այդ 12 ժամեայ գործելը, մանելը, ծակելը, ոլորելը, կառուցանելը, փորելը, քարեր կոփելը նրա կեանքի արտայայտութիւն, կեանք համարել Ընդհակառակը։ Բանուորի համար սկսում է կեանքը միայն այն ժամանակ, երբ նրա այդ գործունէութիւնը դադարում է, այսինքն միայն սեղանի մօտ, սրճարանի նստարանի վրայ, անկողնում։ 12 ժամեայ աշխատանքը, որպէս մանում, գործում, ծակում եւ այլն, նրա համար ոչ մի միտք չունի, եւ ընդհակառակը, միտք ունի միայն այն վաստակումը, որ նրան առաջնորդում է սեղանի մօտ, սրճարանի նստարանի վրայ եւ անկողնի մէջ։ Եթէ մեռաքսէ որդը մանէր, որպէսզի կարողանար իւր գոյութիւնը՝ որպէս թրթուր, ապահովել, այն ժամանակ նա կլինէր մի կատարեալ վարձու բանուոր։

Աշխատանքի ոյժը միշտ ապրանք չէ համարւում։ Աշխատանքը միշտ վարձու աշխատանք չէ եղել — այսինքն ազատ աշխատանք։ Օրինակ ստրուկը չէր վաճառում իւր աշխատանքի ոյժը իւր տիրոջ վրայ, ճիշտ այնպէս, ինչպէս եզը չէ վաճառում իւր արդիւնաբերող ծառայութիւնը գիւղացու վրայ։ Ստրուկը իւր աշխատանքի ոյժի հետ ձուլուած՝ միանգամ ընդ միշտ ծախուած է իւր սեփականատիրոջ վրայ։ Նա մի ապրանք է, որ կարող է մի տիրոջ ձեռքից միւսին ձեռքն անցնել։ Ինքը՝ ստրուկը, ըստինքեան մի ապրանք է, բայց իւր աշխատանքի ոյժը իր ապրանքը չէ։ Ճորտը, օրինակ, ծախում է իւր աշխատանքի միայն մի մասը։ Եւ նա չէ ստանում դրա համար իւր կալուածատիրոջից որեւէ

վարձ, ընդհակառակը գեռ կալուածատէրն է նրանից տուրք կորզում։

Ճորտը կալուածային սեփականութիւն է եւ պաղատերում է կալուածատէրի հողը։ Ընդհակառակը, ազատ բանուորը ծախում է ինքն իրեն, եւ այն էլ մաս-մաս։ Նա օր օրի վրայ աճուրդի է հանում իւր կեանքի 8, 10, 12, 15 ժամերը ամենաշատ առաջարկողներին — հուսնիւթերի, աշխատանքի գործիքների եւ կենսական միջոցների սեփականատէրերին, այսինքն կապիտալիստներին։ Բանուորը պատկանում է ո՛չ սեփականատիրոջ եւ ո՛չ կալուածքին, սակայն իւր օրեայ կեանքի 8, 10, 12, 15 ժամերը պատկանում են նրան, ով նրանց գընում է։ Բանուորը կարող է յաճախ, որքան ինքն ուզենայ, թողնել այն կապիտալիստին, որից նա վարձել է, կամ կապիտալիստը, իւր կողմից, յաճախ, որքան ինքն է կամենում, բաց թողնել բանուորին՝ երբ նա ոչ մի օգուտ կամ դիտաւորեալ օգուտ չէ քաղում նրանից։ Սակայն բանուորը, օրի ապրուստի միակ աղբիւրը աշխատանքի ոյժի վաճառումն է կազմում՝ անկարող է թողնել ու հեռանալ գնողների ամբողջ դասակարգից, այսինքն կապիտալիստների դասակարգից, առանց իւր գոյութիւնից հրաժարւելու։ Նա չի պատկանում այս կամ այն կապիտալիստին, այլ կապիտալիստ դասակարգին, բայց միեւնոյն ժամանակ իրեն՝ բանուորին, է թողնած կապիտալիստ դասակարգի մէջ գնող գտնելու հոգացողութիւնը։

Նախ քան խոր թափանցելը կապիտալի եւ վարձու աշխատանքի յարաբերութեան մէջ, համառօտ գծերով առաջ բերենք այն ընդհանուր յարաբերութիւնները, որոնք ուշադրութեան են առնւում աշխատանքի վարձը որոշելու ժամանակ։

Աշխատավարձը կազմում է, ինչպէս մենք տեսանք, մի որոշ ապրանքի՝ աշխատանքի ոյժի, գինը։ Աշխատա-

վարձը որոշուում է, հետեւապէս, ուղիղ այն օրէնքներով, որոնք որոշում են որեւէ այլ ապրանքի գինը։ Այժմ հարց է ծագում՝ ինչպէս է որոշուում որեւէ ապրանքի գինը։

ԻՆՉՈՎ Է ՈՐՈՇԻՈՒՄ ՄԻ ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ

Դա որոշուում է գնողների եւ վաճառողների մէջ տեղի ունեցած մրցութեամբ, մթերուած ապրանքի նկատմամբ եղած պահանջի (Nachfrage) եւ առաջարկի (Angebot) յարաբերութեամբ։ Այն մրցութիւնը, որով որոշուում է ապրանքի գինը, լինում է երեք տեսակ։

Զանազան վաճառողներ առաջարկում են միեւնոյն ապրանքը։ Ով միեւնոյն որակի ապրանքը վաճառում է աւելի արժան, քան միւսները, ապահով կարելի է ասել, որ նա իրեն կգրաւէ վաճառման ամենամեծ սահմանը, յաղթանակելով միւս վաճառողներին։ Ուրեմն վաճառողները դարձնում են վաճառանոցը փոխադարձ մաքառման ասպարէզ։ Նրանցից իւրաքանչիւրը ուզում է վաճառել, ըստ հնարաւորին՝ շատ վաճառել, եթէ նոյնիսկ հնարաւոր է՝ միայնակ վաճառել, միւս վաճառանոցի բացակայութեամբ։ Եւ այդ պատճառով մէկը վաճառում է աւելի արժան, քան միւսը։ Այսպիսով տեղի է ունենում վաճառողների մէջ մի մրցութիւն, որը ցածրացնում է նրանց կողմից առաջարկուած ապրանքների գները։

Սակայն գնողների մէջ եւս տեղի է ունենում մրցութիւն, որ իւր կողմից բարձրացնում է առաջարկուած ապրանքների գները։

Վերջապէս մրցութիւն կատարւում է գնողների եւ վաճառողների մէջ։ Առաջինները ուզում են ըստ հնարաւորին արժան գնել, իսկ երկրորդները՝ ըստ հնարաւորին թանգ ծախել։ Գնողների եւ վաճառողների մէջ տեղի ունեցած մրցութեան հետեւանքը կախուած է այն հանգամանքից՝ արդէօ՞ք գնողների բանակում տեղի ունեցած մրցութիւնն է աւելի զօրեղ, թէ վաճառողների մէջ կատարուածը։ Ինդուստրիան առաջնորդում է երկու ախոյեան բանակների մառաս դէպի դաշտը, որոնցից իւրաքանչիւրը իւր սեփական կարգերի եւ գնդերի մէջ ճակատամարտ է առաջ բերում։ Այն բանակը, որի գնդերի մէջ տեղի է ունենում ամենափոքրիկ դանակոծութիւնը, յաղթանակում է իւր հակառակորդին։

Ենթադրենք վաճառանոցում գտնուում են 100 բամբակով լիքը կապոցներ եւ միաժամանակ այնքան գնողներ, որոնք 1000 կապոցների կարիք ունեն։ Ուրեմն պահանջն 10 անգամ աւելի մեծ է, քան մթերուած պաշարը։ Այդ պատճառով պէտք է գնողների մէջ մրցութիւնը շատ զօրեղ լինի։ Նրանցից իւրաքանչիւրը ուզում է մի, իսկ եթէ հնարաւոր է բոլոր 100 կապոցները իրեն գրաւել։ Այս օրինակը անիրական ենթադրութիւն չէ։ Մենք գիտենք առեւտրի պատմութեան մէջ բամբակի սակաւութեան այնպիսի շրջաններ, ուր իրար հետ շաղկապած մի քանի կապիտալիստներ որոնում էին գնելու ոչ թէ 100 կապոցներ, այլ եւ երկրագնդի ամբողջ պաշարը։ Վերոյիշեալ դէպքում ուրեմն, իւրաքանչիւր գնող աշխատելու է միւսին հեռու վանել դաշտից եւ բամբակի կապոցի համար հաստատապէս բարձր գին առաջարկել։ Իսկ բամբակ վաճառողները, որոնք լաւ նկատում են թշնամու բանակների մէջ տեղի ունեցած զօրեղ կռիւը եւ բոլորովին համոզուած են իրենց 100 կապոցների վաճառման մէջ, հեռու են պահում իրենց որեւէ մրցութիւ-

նից, որպէսզի դրանով բամբակի գները չընկնեն, քանի որ հէնց նոյն բոլէին իրենց հակառակորդների մրցութիւնը պէտք է գները բարձրացնէ։ Այդ պատճառով մի յանկարծակի խաղաղութիւն է տիրում վաճառողների բանակին։ Նրանք սերա միացած, ձեռք ձեռքի տուած, որպէս մի մարդ, կանգնում են գնողների հանդէպ։ Նրանց պահանջներին վերջ ու սահման չկայ, նոյնիսկ ամենամեծ ախորժակով առաջ մղող գնողների առաջարկը՝ չատ որոշ սահմաններով, չէ գոհացնում նրանց։

Ուրեմն, եթէ որևէ ապրանքի մթերուած պաշարը աւելի փոքր ու թոյլ լինում, քան նոյն ապրանքի նկատմամբ եղած պահանջը, այն ժամանակ տեղի է ունենում վաճառողների մէջ մի չնչին — կամ նոյնիսկ ոչ այդքան — մրցութիւն։ Ինչ յարաբերութեամբ իջնում, թուլանում է այդ մրցութիւնը, բոլորովին նոյն յարաբերութեամբ աճում է գնողների մրցութիւնը։ Իսկ դրա հետևանքը լինում է այն, որ առաւել կամ պակաս չափով բարձրանում են ապրանքի գները։

Յայտնի է, որ աւելի յաճախ տեղի է ունենում բոլորովին հակառակ դէպքը, հակառակ եզրակացութեամբ։ Պահանջի սահմաններից դէնը անցնող մթերուած պաշարի յաւելեալ քանակ, վարանում, յուսահատական մրցութիւն վաճառողների մէջ, գնողների պակասութիւն եւ դրա հետևանքը՝ ապրանքի խիստ արժան գներ։

Ի՞նչ է նշանակում գների բարձրանալը, ընկնելը։ Ի՞նչ է նշանակում բարձր, ցածր գին։ Մի հատ փոքրիկ աւազը խոշորացոյցի տակ երևում է բարձր, իսկ մի աշտարակ՝ համեմատելով լեռան հետ, երևում է ցածր։ Երբ գինը որոշում է պահանջի եւ առաջարկի յարաբերութեամբ, ինչո՞վ է որոշում պահանջի եւ առաջարկի յարաբերութիւնը։

Դառնանք ամենաառաջին պատահած քաղաքացուն։ Նա չպիտի մտածէ մի վարկեան անգամ եւ, որպէս մի նոր Ալէքսանդր Մակեդոնացի, այս մետաֆիզիքական հանդոյցը միանգամայն կլուծէ։ Երբ իւ վաճառած ապրանքի արդիւնաբերութիւնը — պիտի ասէ մեզ քաղաքացին — 100 մարկ է արժենում եւ ես նոյն ապրանքը վաճառելով վաստակում եմ 110 մարկ, այն ժամանակ հասկանալի է, որ տարբայ վերջը ես կունենամ մի քաղաքացիական համեստ, օրինական օգուտ։ Իսկ երբ փոխանակութեան ժամանակ ստանում 120, 130 մարկ, ուրեմն աւելի բարձր օգուտ կունենամ։ Բաստանում 200 մարկ, այն ժամանակ դա կլինէր մի արտաքոյ կարգի մի անդին օգուտ։ Ուրեմն ո՞րն է քաղաքացու ունեցած չափի միակ չափը։ Նրա ապրանքի արդիւնաբերութեան ծախքերը։ Ստանում է նա իւր ապրանքի փոխանակութեան ժամանակ այլ ապրանքի մի քանակ, որի արդիւնաբերութիւնը աւելի արժան է եղել քան իւր ապրանքինը, ապա ուրեմն նա կորցնում է։ Եւ ընդհակառակը, ստանում է նա իւր ապրանքի փոխարէն մի այլ ապրանք, որի արդիւնաբերութիւնը աւելի թանդ է եղել։ Նշանակում է նա շահում է։ Եւ ունեցած չափի ընկնելն ու բարձրանալը նա հաշուում է այն աստիճանների համեմատ, որոնց մէջ իւր ապրանքի փոխանակութեան արժէքը դէրոյից — արդիւնաբերութեան ծախքերից — ցածր կամ բարձր է կանգնում։

Այսպէս մենք տեսանք, թէ ինչպէս պահանջի եւ մթերուած պաշարի փոփոխական յարաբերութիւնը նպաստում է գների արագ բարձրացման եւ արագ անկման, առաջ է բերում երբեմն բարձր եւ երբեմն ցածր գներ։ Երբ մի ապրանքի գին զգալի կերպով բարձրանում է՝ չնորհիւ մթերուած պակասաւոր պաշարի կամ ոչ յարաբերաբար աճող պահանջի, այն ժամանակ անհրաժեշտօրէն ընկնում է մի այլ ապրանքի գին՝ յա-

բարերական աստիճանով։ Սովորաբար ապրանքի գինը արտայայտում է միայն փողի մէջ այն յարաբերութիւնը, որի համաձայն մի այլ երբորդ ապրանք նրանով փոխանակւում է։ Օրինակի համար, թէ մետաքսէ գործուածքի կանգունի գինը բարձրանում է 5 մարկից 6 մարկի, այն ժամանակ արծաթի գինը ընկնում է մետաքսէ գործուածքի յարաբերութեան նկատմամբ։ Նոյն կերպ ընկնում են՝ դարձեալ մետաքսէ գործուածքի յարաբերութեան նկատմամբ, այն բոլոր ապրանքների գները, որոնք կանգնած են մնացել իրենց հին գների վրայ։ Պէտք է դրանցից աւելի մեծ քանակութիւն փոխանակութեան մէջ գայ, որպէսզի կարելի լինի մետաքսէ ապրանքի նոյն քանակութիւնը ստանալ։ Ինչ է լինում մի ապրանքի բարձրացող գնի հետևանքը։ Դրանով գործադրութեան մէջ է մտնում ինդուստրիայի բարգաւաճ մասերում անագին քանակութեամբ կապիտալ եւ կապիտալի այդ շահագործումը՝ ինդուստրիայի նպաստամատոյց սահմանում, կտեւէ այնքան ժամանակ, մինչեւ որ վաստակող շահը կիջնէ սովորական աստիճանի վրայ, կամ աւելի ճիշտ՝ մինչեւ որ գերարտադրութեան շնորհիւ արդիւնքների գինը կիջնէ արդիւնաբերութեան ծախքերից ցած։

Ընդհակառակը, եթէ մի ապրանքի գինը ցած է իջնում իւր արդիւնաբերութեան ծախքերից, այն ժամանակ յետ է վերցւում այդ ապրանքի արդիւնաբերութեան վրայ գործադրւող կապիտալը։ Ժամանակի ոգուն չհամապատասխանող ինդուստրիական մի ճիւղ ստիպւած է դադարելու։ Իսկ գների անկման ժամանակ, պէտք է ապրանքի արդիւնաբերութիւնը, այսինքն վաճառականոցի մթերւած պաշարը այնքան նուազեցնել, մինչեւ որ նա պահանջին համապատասխանէ, գինը կրկին հասնէ արդիւնաբերութեան արժէքի բարձրութեան, կամ աւելի ճիշտ՝ մինչեւ որ պահանջը պա-

շարից աւելի ստանայ, այսինքն մինչեւ որ ապրանքի գինը բարձրանայ արդիւնաբերութեան ծախքերից, որովհետեւ որեւէ ապրանքի ընթացիկ գինը միշտ կանգնած է լինում արդիւնաբերութեան ծախքերից բարձր կամ ցածր։

Այսպէս տեսնում ենք, թէ ինչպէս կապիտալը մշտապէս շարժման մէջ է գտնւում ինդուստրիայի մի ճիւղից դէպի միւսը։ Բարձր գինը առաջ է բերում մի ուժեղ հոսանք դէպի աւեալ ճիւղը, իսկ ցածր գինը՝ աւեալ ճիւղից դուրս։

Մենք կարող էինք մի այլ տեսակէտից ցոյց տալ, որ ոչ միայն առաջարկը, այլեւ ինքը՝ պահանջը որոշւում է արդիւնաբերութեան ծախքերով։ Սակայն այդ մեզ շատ հեռու կտանէր մեր առարկայից։

Մենք վերեւ տեսանք, թէ ինչպէս մթերւած պաշարի եւ պահանջի տատանումները միշտ վեր են ածում ապրանքի գինը արդիւնաբերութեան ծախքերի վրայ։ Իրաւ, մի ապրանքի իսկական գինը մշտապէս կանգնած է լինում արդիւնաբերութեան ծախքերից բարձր կամ ցածր, բայց բարձրանալն ու ընկնելը փոխադարձաբար լրացնում են իրար, այնպէս որ մի որոշ ժամանակի ընթացքում, ինդուստրիայի աղքատ կամ բարգաւաճ վիճակը ի նկատի առնելով, ապրանքները փոխանակւում են՝ համապատասխան իրենց արդիւնաբերութեան ծախքերի, նրանց գները որոշւում են արդիւնաբերութեան ծախքերի միջոցով։

Քաղաքատնտեսները համաձայն չեն գնի այս որոշման։ Նրանք ասում են, որ ապրանքների միջին գինը (Durchschnittspreis) է հաւասար արդիւնաբերութեան ծախքերին։ սա օրէնք է։ Այն անաբեխական շարժումը, որի ընթացքում գների բարձրացումը անկումով եւ անկումը բարձրացումով են պահպանում իրենց հաւասարակշռութիւնը, քաղաքատնտեսները համարում են որպէս պատահականութիւն։ Կարելի էր միեւնոյն ի-

բաւունքով, ինչպէս այդ արել են այլ քաղաքագիտնեմներ, գնների տատանումները համարել որպէս օրէնք, իսկ արդիւնաբերութեան ծախքերի միջոցով որոշելը՝ պատահականութիւն։ Սակայն հէնց այդ տատանումները — որոնք խորը թափանցելով, սարսափելի անապատ են սփռում եւ որպէս երկրաշարժ սարսուռ ձգում բուրժուական հասարակութեան մէջ — միայն այդ տատանումներն են որոշում ապրանքի գինը արդիւնաբերութեան ծախքերի միջոցով։ Այդ անկանոնաւորութեան ամբողջ շարժումը կազմում է նրա կանոնաւորութիւնը։ Այս ինդուստրիական անարխիայի յարատեւ ընթացքում այս շրջանութեան հոսանքի մէջ, մի մրցութիւնը, այսպէս ասած՝ մի այլանդակութիւնը, փոխւում է մրցով։

Այսպէս մենք տեսնում ենք հետեւեալը։ Մի ապրանքի գինը որոշւում է նրա արդիւնաբերութեան ծախքերի միջոցով, բայց այնպէս, որ այն ժամանակը, որի ընթացքում այդ ապրանքի գինը բարձրանում է արդիւնաբերութեան ծախքերից, հատատակչութիւն է պահպանում այն ժամանակի հետ, որի ընթացքում ապրանքի գինը ցած է իջնում արդիւնաբերութեան ծախքերից եւ ընդհակառակը։ Սա չէ կատարւում իհարկէ, միայն մի ինդուստրիական արդիւնքի վերաբերմամբ, այլ մի ամբողջ ինդուստրիական ճիւղ։ Հետեւապէս դա չէ վերաբերում միայն մի քանի մասնաւոր գործարանատէրերի, այլ նրանց ամբողջ դասակարգին։

Գնի որոշումը՝ արդիւնաբերութեան ծախքերի միջոցով, հաւասար է այն գնի որոշման, աշխատանքի ժամանակի միջոցով, որ պահանջւում է մի որեւէ ապրանք արտադրելու համար։ արդիւնաբերութեան ծախքերը կամ արժէքները բաղկացած են. 1. հում նիւթերից եւ գործիքների մաշելուց, այսինքն այնպիսի ինդուստրիական արդիւնքներից, որոնց արտադրութիւնը պահանջել է աշխատանքի օրերի որոշ քանակութիւն, որոնք հետեւապէս, ներկայացնում են աշխատանքի ժամանակի որոշ գումար եւ 2. բաղկացած անմիջական աշխատանքից, որի չափը հէնց ինքը ժամանակն է։

Ուրեմն այն ընդհանուր օրէնքները, որոնք կանոնաւորում են ապրանքների գինը, կանոնաւորում են, իհարկէ, նաեւ աշխատավարձը, աշխատանքի գինը։

Աշխատավարձը երբեմն բարձրանում է, երբեմն՝ ընկնում, նայած պահանջի եւ մթերուած պաշարի կամ առաջարկի յարաբերութեան, նայած թէ ինչպէս է կազմաւորւում մրցութիւնը՝ աշխատանքի ոյժը գնողների, կապիտալիստների, եւ աշխատանքի ոյժը վաճառողների բանւորների մէջ։ Ընդհանուր առմամբ աշխատավարձի տատանումները համապատասխանում են ապրանքների գների տատանումներին։ Իսկ այդ տատանումների ընթացքում աշխատանքի գինը որոշւում է արդիւնաբերութեան ծախքերի, աշխատանքի ժամանակի միջոցով, որ պահանջւում է այդ ապրանքն՝ աշխատանքի ոյժը, առաջ բերելու համար։

Սակայն որո՞նք են աշխատանքի ոյժի արտադրութեան ծախքերը։

Դրանք այն ծախքերն են, որոնք պահանջւում են՝ բանւորին որպէս բանւոր պահպանելու եւ նրան կատարելագործելու՝ բանւորութեան համար։

Այդ պատճառով, որքան մի աշխատանք հրահանգման քիչ ժամանակ է պահանջւում, այնքան էլ փոքր են բանւորի արտադրութեան ծախքերը, այնքան ցածր է նրա աշխատանքի գինը, աշխատավարձը։ Այն ինդուստրիական ճիւղերում, ուր գրեթէ կարիք չէ ըզգացւում հրահանգման, սովորելու ժամանակի եւ ուր բաւական է միայն բանւորի լոկ ֆիզիքական գոյութիւնը, այնտեղ սահմանափակւում են արտադրութեան

թիւնը պահանջել է աշխատանքի օրերի որոշ քանակութիւն, որոնք, հետեւապէս, ներկայացնում են աշխատանքի ժամանակի որոշ գումար եւ 2. բաղկացած անմիջական աշխատանքից, որի չափը հէնց ինքը ժամանակն է։

Ուրեմն այն ընդհանուր օրէնքները, որոնք կանոնաւորում են ապրանքների գինը, կանոնաւորում են, իհարկէ, նաեւ աշխատավարձը, աշխատանքի գինը։

Աշխատավարձը երբեմն բարձրանում է, երբեմն՝ ընկնում, նայած պահանջի եւ մթերուած պաշարի կամ առաջարկի յարաբերութեան, նայած թէ ինչպէս է կազմաւորւում մրցութիւնը՝ աշխատանքի ոյժը գնողների, կապիտալիստների, եւ աշխատանքի ոյժը վաճառողների բանւորների մէջ։ Ընդհանուր առմամբ աշխատավարձի տատանումները համապատասխանում են ապրանքների գների տատանումներին։ Իսկ այդ տատանումների ընթացքում աշխատանքի գինը որոշւում է արդիւնաբերութեան ծախքերի, աշխատանքի ժամանակի միջոցով, որ պահանջւում է այդ ապրանքն՝ աշխատանքի ոյժը, առաջ բերելու համար։

Սակայն որո՞նք են աշխատանքի ոյժի արտադրութեան ծախքերը։

Դրանք այն ծախքերն են, որոնք պահանջւում են՝ բանւորին որպէս բանւոր պահպանելու եւ նրան կատարելագործելու՝ բանւորութեան համար։

Այդ պատճառով, որքան մի աշխատանք հրահանգման քիչ ժամանակ է պահանջւում, այնքան էլ փոքր են բանւորի արտադրութեան ծախքերը, այնքան ցածր է նրա աշխատանքի գինը, աշխատավարձը։ Այն ինդուստրիական ճիւղերում, ուր գրեթէ կարիք չէ ըզգացւում հրահանգման, սովորելու ժամանակի եւ ուր բաւական է միայն բանւորի լոկ ֆիզիքական գոյութիւնը, այնտեղ սահմանափակւում են արտադրութեան

կարեւոր ծախքերը գրեթէ միայն այն ապրանքներով, որոնք անհրաժեշտ են բանւորի կեանքը աշխատանքի ընդունակ դարձնելու եւ պահպանելու համար։ Այդ դէպքում նրա աշխատանքի գինը որոշւում է կենսական անհրաժեշտ պիտոյքների գնով։

Սակայն այստեղ գալիս է ուշադրութեան ե՛ւ մի այլ հանգամանք։ Գործարանատէրը, որ հաշւում է իւր արդիւնաբերութեան ծախքերը եւ ըստ դրանց՝ արդիւնքների գները, գումարում է դրանց հետ ե՛ւ աշխատանքի գործիքների մաշած մասերի արժէքը։ Օրինակի համար, եթէ նրա մեքենան արժէ 1000 մարկ եւ նա մաշւում է 10 տարւայ ընթացքում, այն ժամանակ գործարանատէրը հաշւում է դրա համար իւրաքանչիւր տարին 100 մարկ եւ միացնում ապրանքի գնի հետ, իսկ 10 տարուց յետոյ նա փոխարինում է հնացած մեքենան մի նոր մեքենայով։ Նոյն եղանակով պէտք է աշխատանքի պարզ ոյժի արտադրութեան ծախքերի հետ հաշւի առնեն ե՛ւ աճեցման ծախքերը, որպէսզի բանւորական բաստան դրանով հնարաւորութիւն ունենայ ինքն իրեն բազմացնելու, սերունդ առաջ բերելու եւ ծերացած բանւորներին նորերով փոխարինելու։ Ուրեմն բանւորի մաշումը ճիշտ նոյն կերպ է հաշւեցւում առնւում, ինչպէս մեքենայի մաշումը։

Աշխատանքի պարզ ոյժի արտադրութեան ծախքերը միանում են բանւորի գոյութեան եւ աճեցման ծախքերի հետ։ Այդ գոյութեան եւ աճեցման ծախքերի գինը կազմում է աշխատավարձը։ Այսպէս որոշւած աշխատավարձը կոչւում է աշխատավարձի մինիմումը։ Աշխատավարձի այդ մինիմումը, ինչպէս եւ ընդհանրապէս ապրանքների գների որոշումը՝ արդիւնաբերութեան ծախքերի միջոցով, վերաբերում է ոչ թէ մի մասնաւոր անհատի, այլ ամբողջ սեռի։ Անհատ բանւորը կամ միլլիոնաւոր բանւորներ բաւարար կերպով չեն վարձատրւում, որպէսզի

կարողանան իրենց գոյութիւնը պահպանել եւ բազմանալ։ Իսկ ամբողջ բանւորական դասակարգի աշխատավարձը՝ իւր տատանումների ընթացքում, պատում է այդ մինիմումի շուրջը։

Այժմ, երբ մեզ համար հասկանալի են դարձել աշխատավարձը, ինչպէս եւ իւրաքանչիւր այլ ապրանքի գինը կանոնաւորող ընդհանուր օրէնքները, կարող ենք մասնաւորապէս անցնել մեր առարկային։

Կապիտալը բաղկացած է հում նիւթերից, աշխատանքի գործիքներից եւ ամեն կարգի կենսական միջոցներից, որոնց գործադրութիւնից արտադրւում են նոր հում նիւթեր, աշխատանքի նոր գործիքներ եւ նոր կենսական միջոցներ։ Կապիտալի այս բոլոր բաղկացուցիչ մասերը կազմում են աշխատանքի հայթհայթած արտադրութիւնները, աշխատանքի արդիւնքները, կազմում են այսպէս ասած՝ կուտակւած աշխատանք (aufgehäufte Arbeit)։ Կուտակւած աշխատանքը, որ ծառայում է իբրեւ միջոց նոր արդիւնաբերութեան համար, կոչւում է կապիտալ։

Այսպէս են ասում քաղաքատնտեսները։

Ի՞նչ է ստրուկ-նեգրը։ Մի մարդ սեւ բաստայից։ Մի բացատրութիւնը արժէ միւսին։

Նեգրը նեգր է։ Միայն որոշ յարաբերութիւնների մէջ դառնում է նա ստրուկ։ Բամբակ մանելու մեքենան կազմում է մի մեքենայ՝ բամբակ մանելու համար։ Միայն որոշ պայմանների մէջ դառնում է նա կապիտալ։ Այդ յարաբերութիւններից դուրս նա նոյնքան կապիտալ չէ, որքան ոսկին՝ ըստինքեան որպէս փող կամ շաքարը՝ որպէս շաքարի գին։

Իրերի արդիւնաբերութեան ժամանակ մարդիկ ներգործում են ոչ միայն բնութեան վրայ, այլ եւ միմեանց վրայ։ Նրանք արդիւնաբերում են միայն այն ժամանակ, երբ նրանք մի որոշ եղանակով համագոր-

ծում են եւ իրենց գործունէութիւնը փոխանակում միմեանց վրայ։ Արդիւնաբերելու համար մարդիկ մըտնում են միմեանց հետ որոշ առնչութիւնների եւ յարաբերութիւնների մէջ, եւ հէնց այդ հասարակական առնչութիւնների եւ յարաբերութիւնների ընթացքում է, որ տեղի է ունենում բնութեան վրայ ներգործութիւն եւ կատարւում է արդիւնաբերութիւն։

Նայած արդիւնաբերութեան միջոցների բնաւորութեան, կարող են՝ այն հասարակական յարաբերութիւնները, որոնց մէջ արդիւնաբերողները համադրուած կացում են, այն պայմանները, որոնց ազդեցութեան տակ նրանք փոխանակում են իրենց գործունէութիւնը եւ մասնակցում արդիւնաբերութեան ամբողջ գործողութեան, բնականօրէն տարբեր լինել։ Պատերազմական մի նոր գործիքի՝ հրազէնի, գիւտով, փոխւեց անհրաժեշտօրէն զօրքի ամբողջ ներքին կազմակերպութիւնը, յեղաշրջուեցին այն յարաբերութիւնները, որոնց մէջ անհատները զօրք կազմել եւ որպէս զօրք՝ ներգործել կարող են, փոխւեցան նաեւ զանազան զօրքերի յարաբերութիւնները միմեանց վերաբերմամբ։

Այն հասարակական յարաբերութիւնները, որոնց մէջ անհատները արդիւնաբերում են, այսպէս անուանուած՝ արդիւնաբերութեան հասարակական յարաբերութիւնները փոփոխւում, յեղաշրջւում են՝ նիւթական արդիւնաբերութեան միջոցների, արդիւնաբերութեան ուժերի փոփոխութեան եւ զարգացման հետ միասին։ Արդիւնաբերութեան միջոցները, իրենց ամբողջութեամբ, կազմում են այն, ինչ որ հասարակական յարաբերութիւններ, հասարակութիւն է կոչւում, եւ իրաւ մի հասարակութիւն՝ կանգնած պատմական զարգացման մի որոշ աստիճանի վրայ, մի հասարակութիւն իւր առանձնայատուկ, զանազանակերպ բնաւորութեամբ։ Հին անտիկ հասարակութիւնը, ֆէոդալական հասարակութիւնը եւ բուրժուական հասարակութիւնը կազմում են արդիւնաբե-

րութեան յարաբերութիւնների բարդ ամբողջութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ցոյց է տալիս մարդկութեան պատմութեան մէջ զարգացման որոշ աստիճան։

Կապիտալը եւս համարւում է մի հասարակական արդիւնաբերութեան յարաբերութիւն։ Դա կազմում է բուրժուական արդիւնաբերութեան յարաբերութիւն, արդիւնաբերութեան յարաբերութիւն բուրժուայ հասարակութեան։ Մի՞թէ կենսական միջոցները, աշխատանքի գործիքները, հում նիւթերը, որոնցից բաղկացած է կապիտալը, առաջ չեն եկել եւ դիզուել հասարակական ուսեալ պայմանների եւ հասարակական որոշ յարաբերութիւնների մէջ։ Արդէօ՞ք չպէտք է նրանք մի ժամանակ հասարակական ուսեալ պայմանների եւ հասարակական որոշ յարաբերութիւնների մէջ փոխարինուեն մի այլ նոր արդիւնաբերութեամբ։ Եւ հէնց հասարակական այդ որոշ բնաւորութիւնը չէ, որ նոր արդիւնաբերութեան համար ծառայող արդիւնքներին դարձնում է կապիտալ։

Կապիտալը բաղկացած է ոչ միայն կենսական միջոցներից, աշխատանքի գործիքներից եւ հում նիւթերից, ոչ միայն նիւթական արդիւնքներից, այլեւ նա բաղկացած է նոյնքան շատ փոխանակութեան արժէքներից։ Բոլոր արդիւնքները, որոնցից նա բաղկացած է, կազմում են ապրանքներ։ Ուրեմն կապիտալը միայն նիւթական արդիւնքի մի գումար չէ, նա մի գումար է ապրանքների, փոխանակութեան արժէքների, հասարակական մեծութիւնների։

Կապիտալը կմնայ միշտ նոյնը, արդեօ՞ք մենք բուրդի փոխարէն բրինձ, երկաթուղու փոխարէն շոգենաւ ենք դնում, թէ չէ, այդ միեւնոյնն է, միայն այն նախապայմանով, որ բամբակը, բրինձը, շոգենաւը — այսպէս ասած՝ կապիտալի մարմինը — ունենան փոխա-

նակութեան միեւնոյն արժէքը, միեւնոյն գինը, ինչպէս բուրդը, ցորէնը, երկաթուղին, որոնց մէջ կապիտալը առաջ մարմնացած էր։ Կապիտալի մարմինը կարող է մշտապէս կերպարանափոխուել, առանց կապիտալի չնչին փոփոխութեան։

Սակայն երբ իւրաքանչիւր կապիտալ ապրանքների՝ այսինքն փոխանակութեան արժէքների, մի քանակ է, դա դեռ չի նշանակում, որ ապրանքների փոխանակութեան արժէքների իւրաքանչիւր քանակ կազմում է կապիտալ։

Փոխանակութեան արժէքների իւրաքանչիւր քանակ կազմում է մի փոխանակութեան արժէք։ Իսկ իւրաքանչիւր փոխանակութեան արժէք կազմում է փոխանակութեան արժէքների մի քանակ։ Օրինակ մի տուն, որ 1000 մարկ արժէ, կազմում է 1000 մարկի փոխանակութեան արժէքը։ Մի կտոր թուղթ, որ 1 պֆենիկ արժէ, կազմում $^{100}/_{100}$ պֆենիկների փոխանակութեան արժէքների մի գումար։ Այն արդիւնքները, որոնք փոխանակւում են միւս արդիւնքների հետ, համարւում են ապրանք։ Այն որոշ յարաբերութիւնը, որի մէջ նրանք փոխանակւում են, կազմում է նրանց փոխանակութեան արժէքը, իսկ փողի մէջ արտայայտելով՝ նրանց գինը։ Այդ արդիւնքների զանգւածը ոչինչ չէ փոփոխում, ըստ իւր որոշման՝ ապրանք լինելու, կամ փոխանակութեան արժէք ներկայացնելու եւ կամ մի որոշ գին ունենալու նկատմամբ։ Արդեօ՞ք մի ծառ մեծ է թէ փոքր, այդ միեւնոյն է, նա մնալու է միշտ ծառ։ Արդեօ՞ք մենք երկաթը խորաչափով, թէ ցենտներով ենք փոխանակում ուրիշ ապրանքների հետ, դա չէ փոփոխում իւր բնաւորութիւնը՝ ապրանք, փոխանակութեան արժէք լինելու։ Նայած զանգւածին, իւրաքանչիւր ապրանք ունի աւելի կամ պակաս արժէք, բարձր կամ ցածր գին։

Ուրեմն ի՞նչպէս է ապրանքների փոխանակութեան արժէքների մի գումար՝ կապիտալ կազմում։

Նրանով, որ նա — որպէս ինքնուրոյն հասարակական կարողութիւն, այսինքն որպէս հասարակութեան մի մասի կարողութիւն — ինքն իրեն պահպանում եւ բազմացնում է անմիջական, կենդանի այժի փոխանակութեամբ։ Մի դասակարգի գոյութիւն, որ ոչնչի չէ տիրում, բայց եթէ աշխատանքի կարող ընդունակութեան, կազմում է կապիտալի անհրաժեշտ նախապայմանը։

Միայն կուտակւած, առարկայացած աշխատանքի տիրապետութիւնն է՝ անմիջական, կենդանի աշխատանքի վրայ, որ կուտակւած աշխատանքին կապիտալ է դարձնում։

Կապիտալը չէ կայանում նրանում, որ կուտակւած աշխատանքը ծառայում է կենդանի աշխատանքին, որպէս միջոց նոր արդիւնաբերութեան համար։ Նա կայանում է նրանում, որ կենդանի աշխատանքը ծառայում է կուտակւած աշխատանքին, որպէս միջոց իւր փոխանակութեան արժէքը պահպանելու եւ բազմացնելու։

Ի՞նչ է առաջ գալիս կապիտալիստի եւ վարձու բանւորի մէջ տեղի ունեցած փոխանակութեան ժամանակ։

Բանւորը ստանում է կենսական միջոցներ իւր աշխատանքի այժի փոխանակութեան ժամանակ, իսկ կապիտալիստը իւր կենսական միջոցների փոխանակութեամբ ստանում է աշխատանք, բանւորի արտադրողական գործունէութիւնը, ստեղծագործող այժը, որով բանւորը փոխարինում է ոչ միայն այն, ինչ նա ծախսում է, այլեւ կուտակւած աշխատանքին աւելի մեծ արժէք է տալիս, քան նա առաջ տիրում էր։ Բանւորը ստանում է կապիտալիստից գոյութիւն ունեցող կենսական միջոցների մի մասը։ Ինչի՞ են ծառայում այդ կենսական

միջոցները։ Անմիջական սպառման համար։ Սակայն հէնց որ ես սպառում եմ կենսական պիտոյքները, կորչում են նրանք ինձ համար անդառնալի կերպով։ Եւ պէտք է այն ժամանակը, որի ընթացքում այդ միջոցները պահպանում են իմ կեանքը, օգտակար գործադրեմ, որպէսզի կարողանամ սպառման ժամանակ կորած արժէքների փոխարէն իմ աշխատանքով նոր արժէքներ վաստակել։ Սակայն հէնց այդ վերարտադրող ազնիւ ոյժն է, որ փոխանակութեան ժամանակ տեղի է տալիս բանւորը կապիտալին՝ ստացած կենսական միջոցների համար։ Ուրեմն նա ինքը իւր հաշար կորած է։

Վերցնենք մի օրինակ։ Մի կապալառու վճարում է իւր օրավարձ բանւորին օրեկան 50 պֆենիկ։ 50 պֆենիկի համար աշխատում է նա կապալառուի դաշտում ամբողջ օրը եւ հայթհայթում նրա համար օրեկան 1 մարկ եկամուտ։ Կապալառուն ստանում է ոչ միայն այն արժէքի փոխարէնը, որ նա տեղի է տալիս բանւորին, այլեւ վաստակում է կրկնակի։ Ուրեմն 50 պֆենիկը, որ նա տալիս է բանւորին, գործադրել սպառել է պտղաբեր եւ բեղմնաւոր կերպով։ Նա գնել է 50 պֆենիկի համար բանւորի աշխատանքն ու ոյժը, որ հողի արդիւնքները արտադրում է կրկնակի արժէքով՝ 50 պֆենիկը 1 մարկ դարձնում։ Իսկ օրավարձ բանւորը, ընդհակառակը, իւր արդիւնաբեր ոյժի փոխարէն, որի հետեւողաբար ներգործութիւնը նա տեղի է տուել կապալառուին, ստանում է միայն 50 պֆենիկ եւ փոխանակում կենսական պիտոյքներով, որոնց նա արագ կամ դանդաղ սպառում է։ Ուրեմն 50 պֆենիկը սպառուել է կրկնակի կերպով։ Վերարտադրողաբար կապիտալի համար՝ որովհետեւ նա փոխանակուել է մի այնպիսի աշխատանքի ոյժի հետ, որ 1 մարկ է վաստակել, եւ ոչ արտադրողաբար բանւորի համար, որովհետեւ նա փոխա-

նակուել է կենսական պիտոյքների հետ, որոնք ընդմիշտ անյայտացել են եւ որոնց արժէքը բանւորը կարող է կրկին ձեռք բերել, եթէ նա կրկնէ միեւնոյն փոխանակութիւնը կապալառուի հետ։ Ուրեմն կապիտալը պայմանաւորուած է վարձու աշխատանքով։ Նրանք պայմանաւորում են իրար փոխադարձաբար, նրանք առաջ են գալիս փոխադարձաբար։

Մի՞թէ բամբակեայ գործարանում աշխատող բանւորը արդիւնաբերում է միայն բամբակեայ նիւթեր։ Ո՛չ նա արդիւնաբերում է կապիտալ, նա արտադրում է արժէքներ, որոնք պէտք է նորից միջոց ծառայեն իւր աշխատանքը զեկավարելու եւ նրա միջոցով նոր արժէքներ հայթհայթելու համար։

Կապիտալը կարող է միայն այն ժամանակ աճել, երբ նա փոխանակուէ աշխատանքի հետ, երբ նա վարձու աշխատանքին կեանք տայ։ Կապիտալի հետ փոխանակուող վարձու բանւորի աշխատանքի ոյժը բազմացնում է կապիտալը, զօրեղացնում է նրա կարողութիւնը եւ ինքը նրա ստրուկը դառնում։ Այդ պատճառով կապիտալի աճումը նշանակում է միաժամանակ պրոլետարիատի, բանւորի դասի աճում։

Ուրեմն կապիտալիստի եւ բանւորի շահերը նոյնն են — պնդում են բուրժուաները եւ նրանց քաղաքատնտեսները։ Եւ իրաւ! Բանւորը կխորտակուէ, եթէ կապիտալը նրան չզբաղեցնէ։ Կապիտալը կխորտակուէ, եթէ նա չշահագործէ աշխատանքի ոյժը, իսկ նրան շահագործելու համար պէտք է նա նրան գնէ։ Որքան արագ է աճում արդիւնաբերութեան համար որոշուած կապիտալը՝ արդիւնաբերող կապիտալը, որքան հետեւապէս, ծաղկում, բարգաւաճում է ինդուստրիան, որքան բուրժուազիան շատ է հարստանում, որքան լաւեն առաջ գնում նրա բոլոր ճեռնարկութիւնները, այնքան էլ շատ բանւորների կարիք ունի կապիտալիստը, այնքան էլ բանւորը թանգ կ՝ծախէ իրեն

Հետեւապէս բանուորի բաւարար դրութեան համար անհրաժեշտ պայմանն է՝ արդիւնաբերող կապիտալի ըստ հնարաւորին արագ բազմացումը։

Սակայն ի՞նչ է նշանակում արդիւնաբեր կապիտալի աճումը։ Այդ նշանակում է՝ կուտակուած աշխատանքի կարողութեան աճում՝ կենդանի աշխատանքի վրայ։ Բուրժուազիայի տիրապետութեան շրջանում՝ բանուորական դասի վրայ։ Երբ վարձու աշխատանքը արդիւնաբերում է իրեն տիրապետող օտարի հարստութիւնը, իւր թշնամի կարողութիւնը՝ կապիտալը, այն ժամանակ ըղխում են դրանցից դէպի նրան զրաղման միջոցներ, կենսական պիտոյքներ, սակայն միայն այն պայմանով, որ վարձու աշխատանքը նորից կապիտալի մի մասը դառնայ, մի մղիչ լծակ, որ կրկին ու կրկին առաջնեռէ աճեցման արագ շարժում։

Ասել, թէ կապիտալի եւ բանուորների շահերը նոյնն են, նշանակում է միայն՝ կապիտալն եւ վարձու աշխատանքը կազմում են միեւնոյն յարաբերութեան երկու կողմերը։ Մէկը պայմանաւորուած է միւսով, ճիշտ այնպէս, ինչպէս վաշխառուն եւ վատողը փոխադարձաբար պայմանաւորում են իրար։

Որքան վարձու բանուորը վարձու բանուոր մնայ, այնքան էլ նրա ճակատագիրը կախուած է կապիտալից։ Այս է բանուորի եւ կապիտալիստի շահերի հանրահրաչակ համերինակութիւնը։

Աճո՞ւմ է կապիտալը, ուրեմն աճում է ե՛ւ վարձու աշխատանքի չափը, հետեւապէս աճում նաեւ վարձու բանուորների քանակը։ Մի խօսքով՝ կապիտալի տիրապետութիւնը տարածւում է անհատների աւելի մեծ մասսայի վրայ։ Ենթադրենք ամենանպաստաւոր դէպքը։ Եթէ արդիւնաբերող կապիտալը աճում է, աճում է նաեւ պահանջ դէպի աշխատանք։ Ուրեմն բարձրանում է աշխատանքի գինը՝ աշխատավարձը։

Մի տուն կարող է մեծ կամ փոքր լինել, որքան

նրա շրջապատող տները զարձեալ փոքր են, այնքան նա բաւականութիւն է տալիս հասարակական բոլոր պահանջներին մի բնակարանով։ Բայց երբ կառուցւում է փոքր տան մօտ մի պալատ, այն ժամանակ փոքր տունը փոխարկւում է մի անճոռնի խրճիթի։ Այն ժամանակ փոքրիկ տան գոյութիւնը վկայում է միայն, որ նրա՝ տան տէրը շատ չնչին պահանջներ ունի, կամ նոյնիսկ պահանջներ չունի։ Կարող է քաղաքակրթութեան ընթացքում տունը մնծանալ, վեր բարձրանալ, իսկ եթէ հարեւան պալատը նոյն կամ աւելի մեծ չափով վե՛ր բարձրանայ, այն ժամանակ փոքրիկ տան բնակիչները պէտք է իրենց միշտ անհանգիստ, դժգոհ եւ ճնշուած զգան չորս պատերի մէջ։

Աշխատավարձի փոքր ինչ արագ բարձրացումը պայմանաւորում է արդիւնաբեր կապիտալի արագ աճեցում։ Իսկ արդիւնաբեր կապիտալի արագ աճեցումը առաջ է կոչում նոյնքան արագ կերպով հարստութեան, լուքսուսի, հասարակական կարիքների եւ հասարակական զարգացութիւնների աճեցում։ Եւ թէեւ դրանով բարձրանում է բանուորի վայելքի եւ զարգացման աստիճանը, այնուամենայնիւ ընկնում է հասարակական բաւարարութեան աստիճանը, համեմատած կապիտալիստների բազմացած զարգացութիւնների եւ վայելքների հետ — որոնք բանուորի համար բնաւ մատչելի չեն — եւ համեմատած ընդհանրապէս հասարակական զարգացման աստիճանի հետ։ Մեր կարիքները եւ վայելքները ըղխում են հասարակութեան ծոցից, այդ պատճառով մենք չափում ենք նրանց հասարակութեան ընդհանուր դրութեամբ եւ ոչ թէ բաւարարութիւն տուող առարկաներով։ Եւ որովհետեւ նրանք հասարակական բնաւորութիւն ունեն, այդ պատճառով նրանք համեմատական բնաւորութիւն ունեն։

Աշխատավարձը չէ որոշւում միայն այն ապրանք-

ների չափով, որ նա փոխանակում եմ օրավարձի հետ. նա պարունակում է եւ այլ յարաբերութիւններ։

Ինչ որ բանւորները իրենց աշխատանքի ոյժի փոխարէն ստանում են, կազմում է փողի մի որոշ գումար։ Սակայն որոշւո՞ւմ է աշխատավարձը միայն այդ փողային գնով։

Շնորհիւ Ամերիկայում գտած հարուստ եւ հեշտ շահագործւող ազնիւ մետաղի հանքերի, 16-րդ դարում բազմանում է Եւրոպայում շրջանառութեան մէջ մտած ոսկին ու արծաթը։ Իսկ դրա հետեւանքը լինում է ոսկու եւ արծաթի արժէքի անկումը՝ համեմատութեամբ ուրիշ ապրանքների։ Բանւորները վարձատրւեցին իրենց աշխատանքի ոյժի համար ինչպէս առաջ, այնպէս էլ յետոյ՝ դրամահատւած արծաթի միեւնոյն չափով։ Նրանց աշխատանքի փողային գինը մնաց միեւնոյնը եւ սակայն ընկել էր աշխատավարձը, որովհետեւ փոխանակութեան ժամանակ նրանք ստանում էին արծաթի միեւնոյն գումարի համար այլ ապրանքների էլ քանակ։ Սա մէկն էր այն հանգամանքներից, որոնք նպաստել են 18-րդ դարում կապիտալի աճեցման եւ բուրժուազիայի յառաջադիմութեան։

Վերցնենք մի ուրիշ դէպք։ 1847 թ. ձմեռը, վատ հունձի պատճառով զգալի կերպով բարձրացել էին կենսական ամենահրաժեշտ պիտոյքների՝ ցորենի, մսի, պանրի եւ այլն գները։ Ենթադրենք, որ բանւորները ստանում էին իրենց աշխատանքի ոյժի համար փողի այն գումարը, ինչպէս առաջ։ Արդեօք չէր ընկել նրանց աշխատավարձը։ Անտարակոյս։ Միեւնոյն փողով ստանում էին նրանք փոխանակութեան ժամանակ աւելի քիչ հաց, միս եւ այլն։ Նրանց աշխատավարձը ընկել էր ոչ թէ նրա համար, որ արծաթի արժէքը նւազել էր, այլ այն պարզ պատճառով, որ կենսական միջոցների արժէքը բարձրացել էր։

Վերջապէս ենթադրենք, որ փողի գինը մնում է նոյնը, մինչդեռ բոլոր երկրագործական եւ ինդուստրիական արդիւնքների գինը ընկնում են, շնորհիւ տարբայ լաւ ժամանակին, նոր մեքենաների գործադրութեան եւ այլն։ Այժմ բանւորները կարող են միեւնոյն փողով աւելի շատ ապրանքներ գնել՝ բոլոր տեսակի ուրեմն նրանց աշխատավարձը բարձրացել է, որովհետեւ նրա փողի արժէքը չի փոխւել։

Աշխատանքի փողային գինը՝ անուանական (nominell) աշխատավարձը, չի ծածկում իսկական (reell) աշխատավարձը, այսինքն այն ապրանքների քանակը, որ իրաւ աշխատավարձի փոխանակութեամբ ստացւում են։ Երբ, ուրեմն, խօսում ենք աշխատավարձի բարձրացման եւ անկման մասին, չպիտի միայն ուշադրութեան առնենք աշխատանքի փողային գինը՝ անուանական աշխատավարձը։

Սակայն անուանական աշխատավարձը, այսինքն այն փողի գումարն, որի համար բանւորը ինքն իրեն ծախում է կապիտալիստի վրայ եւ ոչ աշխատանքի իսկական վարձը, այսինքն այն ապրանքների քանակը, որ գնում է նա այդ փողով — սպառում են աշխատավարձի մէջ եղած յարաբերութիւնները։

Աշխատավարձը որոշւում է դեռ ամենից առաջ այն յարաբերութեամբ, որ նա ունի դէպի կապիտալիստի շահը — այսինքն համեմատական, յարաբերական աշխատավարձ։

Աշխատանքի իսկական վարձը արտայայտում է աշխատանքի գինը այն յարաբերութեամբ, որ նա ունի դէպի միւս ապրանքների գները։ Աշխատանքի համեմատական վարձը կազմում է անմիջական աշխատանքի արտադրած արժէքների մի մասը, յարաբերութեամբ այն մասի, որ միանում, ձուլւում է կուտակւած աշխատանքին՝ կապիտալին։

Մենք ասացինք վերեւ մի տեղ. «Աշխատավարձը չէ կազմում բանւորի արդիւնաբերած ապրանքի մի մասը։ Աշխատավարձը կազմում է արդէն գոյութիւն ունեցող ապրանքների մի մասը, որով կապիտալիստը գնում է արդիւնաբեր աշխատանքի ոյժի մի որոշ քանակ»։ Սակայն կապիտալիստը պէտք է այդ աշխատավարձը կրկին փոխարինէ այն գնով, որ նա ստանում է բանւորի արտադրած ապրանքների վաճառումից։ Նա պէտք է այնպէս փոխարինէ, որ միեւնոյն ժամանակ նրան ըստ սովորութեան արդիւնաբերութեան ծախքերի սահմանից դէնը անցնող դեռ մի յաւելուած, շահ մնայ։ Բանւորի արդիւնաբերած ապրանքի վաճառման գինը բաժանւում է կապիտալիստի համար երեք մասի։ Առաջին՝ իւր կողմից հայթհայթւած հումներների գնի եւ շարժիչների, մեքենաների, ապա աշխատանքի այլ միջոցների մաշման փոխարինութիւն։ Երկրորդ՝ իւր կողմից նախավճարած աշխատավարձի փոխարինութիւն եւ երրորդ՝ մի յաւելուած՝ կապիտալիստի շահը։ Մինչդեռ առաջին մասը փոխարինում է միայն վաղուց գոյութիւն ունեցող արժէքներին, պարզ է, որ ինչպէս աշխատավարձի փոխարինութիւնը, այնպէս էլ կապիտալիստի յաւելեալ շահը, ամբողջովին վերցնում են բանւորի աշխատանքի միջոցով վաստակած եւ հում նիւթերին աւելացրած նոր արժէքից։ Եւ այս տեսակէտից կարող ենք ինչպէս աշխատավարձը, այնպէս էլ շահը — նրանց միմեանց հետ համեմատելու համար — ըմբռնել որպէս աշխատանքի արդիւնքի բաժիններ։

Աշխատանքի իսկական վարձը կարող է նոյնը մընա, նա կարող է նոյնիսկ բարձրանալ եւ աշխատանքի համեմատական վարձը կարող է ոչ սակաւ ընկնել։ Ենթադրենք, օրինակ, որ բոլոր կենսական միջոցների գինը ընկնում է $^2/_3$-ով, մինչդեռ օրավարձը ընկնում է $^1/_3$-ով, օրինակ 3 մարկից դառնում է 2 մարկ։ Թէեւ

այժմ բանւորը 2 մարկով ապրանքի աւելի մեծ քանակ է գնում քան առաջ 3 մարկով, այնուամենայնիւնրա աշխատավարձը նւազել է կապիտալիստի շահի համեմատութեամբ։ Կապիտալիստի (օրինակ գործարանատիրոջ) շահը մի մարկով աւելացել է, այսինքն փոխանակութեան արժէքների մի չնչին քանակի պայմանով, որ նա վճարում է բանւորին, պէտք է այժմ բանւորը փոխանակութեան արժէքների աւելի մեծ քանակ արդիւնաբերէ, քան առաջ։ Կապիտալի բաժինը, համեմատած աշխատանքի բաժնի հետ, բարձրացել է։ Հասարակական հարստութեան բաժանումը՝ կապիտալի եւ աշխատանքի մէջ, դարձել է դրանով դեռ աւելի անհամաչափ։ Կապիտալիստը իշխում է միեւնոյն կապիտալով աշխատանքի աւելի մեծ քանակութեան վրայ։ Աճե՛լ է կապիտալիստ դասակարգի ոյժն ու կարողութիւնը բանւոր դասակարգի վրայ, վատթարացել է բանւորի հասարակական դիրքը եւ մի աստիճանով դեռ է՛լ աւելի ցած խոնարհւել կապիտալիստից։

Ուրեմն ո՞րն է այն ընդհանուր օրէնքը, որ որոշում է աշխատավարձի եւ շահի անկումն ու բարձրացումը՝ իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ։

Նրանք կանգնած են հակառակ յարաբերութեան մէջ։ Կապիտալի բաժինը՝ շահը, բարձրանում է նոյն յարաբերութեամբ, որով աշխատանքի բաժինը՝ օրավարձը, ընկնում է, եւ ընդհակառակը։ Շահը բարձրանում է նոյն չափով, որով աշխատավարձը ընկնում է, նա ընկնում է նոյն չափով, որով աշխատավարձը բարձրանում է։

Գուցէ առարկեն, թէ կապիտալիստը կարող է շահել իւր արդիւնքների նպաստաւոր փոխանակութեամբ՝ այլ կապիտալիստների հետ, պահանջի բարձրացումով՝ դէպի իւր ապրանքը, լինի այդ հետեւանք նոր բացւած վաճառանոցների, թէ հետեւանք հին վաճառանոցներում բոպէապէս ածած կարիքների եւ այլն։ որ,

ուրեմն, կարող է կապիտալիստի շահը աճել մի երրորդ կապիտալիստի առաջարկած նպաստաւոր պայմանների միջոցով, անկախ աշխատավարձի, աշխատանքի այժի փոխանակութեան արժէքի բարձրանալուց եւ ընկնելուց. կամ թէ չէ կապիտալիստի շահը կարող է նաեւ բարձրանալ՝ աշխատանքի գործիքների նորոգութեան, բնական այժերի գործադրութեան միջոցով եւ այլն։

Նախ եւ առաջ պէտք է ընդունել, որ ինչպէս էլ լինի, հետեւանքը մնում է բոլորովին միեւնոյնը, թէեւ ուղղութիւնը ընթանում է հակառակ ճանապարհով։ Իրաւ, ոչ թէ շահը բարձրացել է, որովհետեւ աշխատավարձը ընկել է, այլ աշխատավարձը ընկել է, որովհետեւ շահը բարձրացել է։ Կապիտալիստը ստանում է օտար աշխատանքի միեւնոյն քանակի միջոցով փոխանակութեան արժէքների աւելի մեծ քանակ, առանց աշխատանքը բարձր գնահատելու եւ վճարելու։ այսինքն աշխատանքը վճարւում է աւելի ցածր՝ այն զուտ արդիւնքի համեմատութեամբ, որ բաժին է ընկնում կապիտալիստին։

Դրա հետ յիշենք նաեւ այն, որ հակառակ ապրանքների գների տատանումներին, իւրաքանչիւր ապրանքի միջին գինը՝ այն յարաբերութիւնը, ըստ որի փոխանակւում են ապրանքները, որոշւում է արդիւնաբերութեան ծախքերի միջոցով։ Այդ պատճառով կապիտալիստ դասակարգի մէջ եղած յաւելեալ օգուտները անհրաժեշտօրէն պահպանում են հաւասարակշռութիւն։ Մեքենաների նորոգումը, բնութեան այժերի գործադրութիւնը՝ արդիւնաբերութեան ծառայեցնելու համար, իրաւ օժտում են՝ աշխատանքի մի որոշ ժամանակում աշխատանքի ու կապիտալի միեւնոյն գումարով արդիւնքների աւելի մեծ քանակ արտադրելու, բայց ոչ երբէք փոխանակութեան արժէքների աւելի

մեծ քանակ հայթհայթելու։ Եթէ ես մանելու մեքենայի գործադրութեամբ մի ժամում երկու անգամ աւելի մանուածք ձեռք բերեմ քան մեքենայի գիւտից առաջ, օրինակ 100 գրանքայ 50-ի փոխարէն, դա դեռ չի նշանակում որ ես այս 100 գրանքայով փոխանակութեան ժամանակ աւելի շատ ապրանք կստանամ քան առաջ՝ 50 գրանքայի համար, որովհետեւ արդիւնաբերութեան ծախքերը կիսով չափ ընկել են, կամ որովհետեւ ես կարող եմ միեւնոյն ծախքերով կրկնակի արդիւնք հայթհայթել։

Վերջապէս ինչ յարաբերութեամբ էլ միշտ կապիտալիստ դասակարգը՝ բուրժուազիան — լինի դա մի երկրում թէ համաշխարհային վաճառականոցի մէջ — արդիւնաբերութեան զուտ եկամուտը իւր մէջ բաժանէ, իւրաքանչիւր անգամ այդ զուտ եկամուտի ամբողջ քանակը կազմում է այն գումարը, որ կուտակուած աշխատանքը ընդհանուր առմամբ անմիջական աշխատանքի միջոցով աւելացել բազմացել է։ Ուրեմն այդ ընդհանուր գումարը աճում է այն յարաբերութեամբ, որով աշխատանքը կապիտալ է կուտակում, այն յարաբերութեամբ, ինչ յարաբերութեամբ որ շահը բարձրանում է աշխատանքի վարձի դէմ։

Այսպիսով տեսնում ենք ուրեմն, որ նոյնիսկ, եթէ մենք կանգնենք կապիտալի եւ վարձու աշխատանքի յարաբերութեան տեսակէտի վրայ, անուամենայնիւ կապիտալի եւ վարձու աշխատանքի ինտերեսները կանգնած են ուղիղ իրար դէմ ու դէմ։

Կապիտալի արագ աճումը հաւասար է շահի արագ աճմանը։ Շահը կարող է միայն արագ աճել, եթէ աշխատանքի գինը, եթէ աշխատանքի համեմատական վարձը, նոյնքան արագ հետազում է։ Աշխատանքի համեմատական վարձը կարող է ընկնել, թէեւ միաժամանակ բարձրանայ աշխատանքի իսկական վարձը, աշխատանքի անուանական վարձի՝ աշխատանքի փողային արտ-

ժէքի հետ միասին, բայց չի բարձրանում միեւնոյն յարաբերութեամբ, ինչպէս շահը։ Օրինակի համար, եթէ գործերի լաւ ժամանակ աշխատավարձը բարձրանում է 5 %-ով, իսկ շահը, ընդհակառակը, 30 %-ով, այն ժամանակ աշխատանքի յարաբերական, համեմատական վարձը չի աճում, այլ նուազանում է։

Մեծանում է բանուորի եկամուտը՝ կապիտալի արագ աճման հետ, ապա ուրեմն մեծանում է միաժամանակ այն հասարակական վիճը, որ բաժանում է բանուորին կապիտալիստից։ ապա ուրեմն մեծանում է միաժամանակ կապիտալի ոյժն ու կարողութիւնը աշխատանքի վրայ, աշխատանքի կախումը կապիտալից։

Ասել, թէ բանուորը որեւէ ինտերես ունի կապիտալի արագ աճումից, նշանակում է միայն, որքան բանուորը արագ է մեծացնում օտարի հարստութիւնը, այնքան էլ իւղալից պատառ է նրան բաժին ընկնում, այնքան շատ բանուորներ կարող են զբաղուել, հրապարակ գալ եւ այնքան էլ շատ կմեծանայ կապիտալից կախում ունեցող ստրուկների մասսան։

Այսպէս մենք տեսանք։

Նոյնիսկ բանուոր դասակարգի ամենանպաստաւոր դրութիւնը՝ ըստ հնարաւորին կապիտալի մեծ չափով աճումը, որքան էլ բարելաւէ բանուորի տնտեսական վիճակը, այնուամենայնիւ չի վերացնում նրա ինտերեսների եւ բուրժուազիայի՝ կապիտալիստ դասի, ինտերեսների սուր հակասութիւնը։ Շահը եւ աշխատավարձը ամէն դէպքում կանգնած են հակառակ յարաբերութեան մէջ։

Կապիտալի արագ աճման ժամանակ կարող է աշխատավարձը բարձրանալ, սակայն միեւնոյն ժամանակ անհամեմատ արագ բարձրանում է կապիտալի շահը։ Բանուորի նիւթական վիճակը լաւանում է, սակայն միայն հասարակական ընդհանուր դրութեան նկատմամբ։ Հասարակական խոր անդունդը, որ բա-

ժանում է նրան կապիտալիստից, աւելի է ընդլայնւում։

Վերջապէս.

Ասել, թէ վարձու աշխատանքի ամենանպաստաւոր պայմանը կազմում է արդիւնաբեր կապիտալի ըստ հնարաւորին արագ աճումը, նշանակում է միայն, որքան բանուոր դասակարգը իրեն թշնամի կարողութիւնը, իւր վրայ տարածող օտարի հարստութիւնը բազմացնում ու զօրեղացնում է, այնքան էլ նպաստաւոր պայմաններ պիտի առաջարկւի նրան աշխատելու, զարկ տալու կապիտալի տիրապետութեան ծաւալման, դոն, որ ինքը կռում, կոփում է այն ոսկէ շղթաները, որոնց բուրժուազիան իւր յետեւ փայլեցնում է։

Մի՞թէ իսկապէս արդիւնաբեր կապիտալի աճումը եւ աշխատավարձի բարձրացումը այնպէս անբաժան շաղկապած են իրար հետ, ինչպէս այդ պնդում են բուրժուայ քաղաքատնտեսները։ Մենք չպիտի համարձակւենք նրանց խօսքին հաւատալու։ Մենք չպիտի հաւատանք նոյնիսկ, որ իբր որքան կապիտալը թանձրանայ, կուտակւի, այնքան նրա ստրուկը կպարարտւի, ճարպոտ կդառնայ։ Բուրժուազիան շատ է լուսաւորւել, նա շատ լաւ հաշւում է, ճիշտ այնպէս, ինչպէս ֆէօդալը, որ իւր ճորտերի քրտինքով վաստակած շքեղաշուք փայլով փառահեղ էր դարձնում իրան։ Այո՛, բուրժուազիայի գոյութեան պայմանները բռնադատում են իրան այդպէս հաշւելու, այդպէս դատելու։

Մենք պէտք է այդ խոր հետազօտենք։

Ի՞նչպէս է ազդում արդիւնաբեր կապիտալի աճումը աշխատավարձի վրայ։

Եթէ ըստ ամենայնի աճում է բուրժուայ հասարակութեան արդիւնաբեր կապիտալը, այն ժամանակ տեղի է ունենում աշխատանքի բազմակողմանի կուտակում։ Կապիտալիստները բազմանում են թւով ու ծաւալով։

Կապիտալի մեծենալը զբաղեցնում է կապիտալիստների փոխադարձ մրցութիւնը։ Կապիտալի աճող ծաւալը միջոց է տալիս նրանց ինդուստրիական ճակատամարտի դաշտը հանել անագին քանակութեամբ բանուորական զօրք՝ զինուած պատերազմական հակայական գործիքներով։

Մի կապիտալիստ կարող է միայն այն ժամանակ միւսին ջարդել եւ նրա բաժին կապիտալը նուաճել, երբ նա աւելի արժան վաճառէ։ Սակայն որպէսզի նա կարողանայ արժան վաճառել եւ միեւնոյն ժամանակ ինքն իրեն չկործանել, պէտք է նա աւելի արժան արդիւնաբերել, այսինքն աշխատանքի արդիւնաբերող ոյժը ըստ հնարաւորին լարէ ու բարձրացնէ։ Բայց աշխատանքի արդիւնաբերող ոյժը կարող է ամենից առաջ բարձրանալ աշխատանքի աւելի մեծ բաժանումով, մեքենաների բազմակողմանի ներմուծումով եւ նրանց մշտական նորոգութեամբ։ Որքան մեծ է բանուորական բանակը, որի մէջ բաժանուած է աշխատանքը, որքան հակայական է մեքենաների գործադրութեան աստիճանը, այնքան էլ հաւեմատական չափով նուազում են արդիւնաբերութեան ծախքերը, այնքան էլ բեղմնաւոր է դառնում աշխատանքը։ Այդ պատճառով ծագում է կապիտալիստների մէջ մրցութեան մի ընդհանուր եւանդ — բազմացնել աշխատանքի բաժանումը եւ մեքենաները, եւ չահագործել նրանց ըստ հնարաւորին բարձր աստիճանով։

Դա՞ել է արդեօք մի կապիտալիստ աշխատանքի բազմակողմանի բաժանման, նոր մեքենաների գործադրութեամբ եւ նորոգութեամբ, բնութեան ոյժերի նրպատաւոր եւ մեծ քանակի չահագործութեամբ մի միջոց, որով նա կարողանար աշխատանքի կամ կուտակուած աշխատանքի միեւնոյն քանակով արդիւնքների, ապրանքների աւելի մեծ քանակութիւն հայթհայթելու, քան նրա մրցակիցները։ կարո՞ղ է նա, օրինակ

աշխատանքի միեւնոյն ժամանակում, որի ընթացքում նրա մրցակիցները կէս կանգուն կտաւ են գործում, ինքը մի ամբողջ կանգուն կտաւ արդիւնաբերել։ Ի՞նչպէս պէտք է այդ կապիտալիստը գործէ։

Նա կարող է չարունակել կէս կանգուն կտաւը մինչեւ այդ ժամանակուայ վաճառականացային գնով ծախել։ սակայն դա չի կարող ամենուին միջոց ծառայել իւր հակառակորդին դուրս վանելու դաշտից եւ իւր սեփական վաճառականացային սահմանը ընդարձակելու։ Բայց միեւնոյն չափով, որով ընդարձակւում է նրա արդիւնաբերութիւնը, ընդարձակում է նաեւ նրա համար մեծ շուկայ ունենալու պահանջը։ Արդիւնաբերութեան անհամեմատ ուժեղ եւ թանդագին միջոցները, որոնց նա հրապարակ է բերում, իսկապէս օժտում են իւր ապրանքը աւելի արժան վաճառելու։ սակայն ընդաղատում են նրան միեւնոյն ժամանակ աւելի շատ ապրանք վաճառելու, իւր ապրանքների համար մի անհամեմատ մեծ վաճառանոց նուաճելու։ ուրեմն մեր կապիտալիստը պէտք է կէս կանգուն կտաւը աւելի արժան վաճառէ, քան իւր մրցակիցները։

Սակայն կապիտալիստը չպիտի ամբողջ կանգունը այնպէս արժան ծախէ, ինչպէս իւր մրցակիցները կէս կանգունն են ծախում, թէեւ ամբողջ կանգունի արդիւաբերութիւնը նրա վրայ աւելի չարժէ, քան կէս կանգունը միւսների վրայ։ ապա թէ ոչ նա չէ կարող արտաքոյ կարգի շահ ձեռք բերել, այլ միայն փոխադարձութեան ժամանակ կծածկէ արդիւնաբերութեան ծախքերը։ Նրա պատասխանն մեծ եկամուտը կարող է բղխել նրանից, որ նա աւելի կատարելագործուած կապիտալ է չարժման մէջ դրել, եւ ոչ նրանից, որ նրա կապիտալը աւելի բարձր աստիճանի չահագործութիւն է ունեցել, քան միւսներինը։ Այդ անակէսից նա կը հասնէ այն նպատակին, որին նա հասնել է ուզում միայն այն ժամանակ, երբ նա իւր ապրանքների գի-

նը մի քանի տոկոսով ցածր նշանակէ, քան իւր մրցակիցները։ Նա դուրս է մղում նրանց դաշտից, նա կորզում է նրանց ձեռքից վաճառանոցի գոնէ մի մասը, երբ նա ցածր գնով է ծախում։ Եւ վերջապէս յիշենք, որ ընթացիկ գինը կանգնում է միշտ արդիւնաբերութեան ծախքերից բարձր կամ ցածր, նայած թէ ապրանքի վաճառքը կատարւում է ինդուստրիայի նպաստաւոր թէ աննպաստ ժամանակամիջոցում։ Նայած թէ մի կանգուն կտաւի վաճառանոցային գինը կանգնած է արդիւնաբերութեան մինչեւ այժմ սովորական ծախքերից ցածր թէ բարձր — փոփոխւում են տոկոսները, որոնց համաձայն կապիտալիստը՝ որ արդիւնաբերութեան նոր բեղմնաւոր միջոցներ է գործադրել, ծախում է իր ապրանքը արդիւնաբերութեան ծախքերից աւելի բարձր գնով։

Սակայն մեր կապիտալիստի արտօնութիւնը տեւական չէ։ ուրիշ մրցակից կապիտալիստներ եւս գործադրում են միեւնոյն մեքենաները, մտցնում աշխատանքի միեւնոյն բաժանումը, հասցնում են դրանց գործունէութեան միեւնոյն կամ աւելի բարձր ինտենսիւ աստիճանի վրայ, եւ այդ ներմուծումը այն աստիճան է ընդհանրանում, մինչեւ որ կտաւի գինը ոչ թէ միայն հին, այլեւ նոր արդիւնաբերութեան ծախքերից ցած է իջնում։

Ուրեմն կապիտալիստները գտնւում են այժմ փոխադարձաբար միեւնոյն դրութեան մէջ, որի մէջ նրանք գտնւում էին արդիւնաբերութեան նոր միջոցների ներմուծումից առաջ, եւ եթէ նրանք կարողանան այդ միջոցներով միեւնոյն գնի կրկնակի արդիւնք ձեռք բերել, այժմ նրանք բռնադատւած են հին գնից ցածր պայմանով կրկնակի արդիւնք հայթհայթել։ Եւ այդպէս, արդիւնաբերութեան այդ նոր ծախսերի շրջանում սկսւում է կրկին նոյն խաղը։ Աշխատանքի մեծ բաժանում, կատարելագործւած մեքենաներ եւ այդ

բոլորի բարձր աստիճանի շահագործութիւն։ Մրցութիւնը բերում է կրկին միեւնոյն հակազդեցութիւնը այս նոր հետեւանքի դէմ։

Այսպէս տեսնում ենք, թէ ինչպէս արդիւնաբերութեան եղանակն ու միջոցները մշտապէս փոխակերպւում, յեղաշրջւում են, թէ ինչպէս ամենայն անհրաժեշտութեամբ միմեանց հետեւում են. աշխատանքի բաժանումն՝ աւելի բազմակողմանի աշխատանքի բաժանում, մեքենաների գործադրութիւն՝ աւելի կատարելագործւած մեքենաների գործադրութեան, բարձր աստիճանի գործունէութեան՝ աւելի բարձր աստիճանի գործունէութիւն։

Այս օրէնքն է, որի հիման վրայ բուրժուական արդիւնաբերութիւնը միշտ եւ կրկին առաջ է նետւում իւր հին շաղից եւ բռնադատում կապիտալին՝ աշխատանքի արդիւնաբեր ոյժերը ուժգնապէս լարելու։ օրէնք, որ կապիտալին ոչ մի հանգստութիւն չէ շնորհում եւ շարունակ շշնջում է՝ յառա՛ջ, յառա՛ջ։

Դա ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ այն օրէնքը, որ առեւտրական զանազան շրջանների տատանումների ընթացքում ապրանքի գինը անհրաժեշտօրէն հաւասարեցնում է արդիւնաբերութեան ծախքերին։

Որքան էլ մի կապիտալիստ արդիւնաբերութեան վերթխարի միջոցներ առաջնորդէ, եւ հէնց այն բոպէից սկսած, երբ նրանք հանրական երեւոյթ են դառնում, մնում է սկզբնական կապիտալիստի բեղմնաւոր կապիտալի միակ հետեւողից յաջողութիւնը գտնել այն հանգամանքի մէջ, որ նա միեւնոյն գնի համար 10, 20, 100 անգամ աւելի պէտք է հայթհայթէ, քան առաջ։ Բայց որովհետեւ նա գուցէ 1000 անգամ աւելի պիտի վաճառէ, որպէսզի կարողանայ վաճառւած արդիւնքների ահագին զանգւածի միջոցով վաճառքի ցած գների մէջ չափ պահպանել. որովհետեւ կարեւոր է այժմ մասսայական վաճառքը, ոչ թէ չահելու համար,

այլ որպիսի կարելի լինի արդիւնաբերութեան ծախքերը ծածկել — արդիւնաբերութեան գործիքները, ինչպէս մենք տեսանք, պիտի միշտ աւելի ու աւելի թանգանան. — այնուհետև, որովհետև մասնայական վաճառքը կեանքի խնդիր է դարձել ոչ միայն նրա (սկզբնական կապիտալիստի) համար, այլև իւր ախոյանների համար, — ահա այդ բոլոր պատճառների հիման վրայ սկսում է հին կռիւը այնքան ուժեղ կերպով, որքան բեղմնաւոր են արդիւնաբերութեան նորագիւտ միջոցները։ Որեմն աշխատանքի բաժանումը եւ մեքենաների գործադրութիւնը առաջ է գնում նորից անհամեմատ մեծ մասշտաբով։

Որքան էլ հակայական լինի արդիւնաբերութեան վրայ գործադրուող միջոցների ոյժն ու կարողութիւնը, այնուամենայնիւ մրցութիւնը որոնում է միշտ կապիտալից յաշտակելու այդ կարողութեան ոսկէ պրտուղները, երբ նա ապրանքի գինը ցածրացնում է մինչև արդիւնաբերութեան ծախքերի աստիճանը. երբ նա, հետևապէս, միեւնոյն չափով արժան է արդիւնաբերում այսինքն աշխատանքի միեւնոյն քանակով աւելի շատ է արդիւնաբերում. երբ նա արժան արդիւնաբերութիւնը արդիւնքների աւելի ու աւելի մեծ մասշտաբով հայթհայթումը՝ միեւնոյն գնի գումարի համար, դարձնում է մի վճռական օրէնք։ Եւ այսպէս կապիտալիստը իւր ինքնուրոյն ձգտումներով ոչինչ չէր կարող վատակել, բայց թէ մի պարտականութիւն՝ աշխատանքի միեւնոյն ժամանակամիջոցում աւելի շատ հայթհայթել մի խօսքով՝ իւր կապիտալի շահեցման համար աւելի դժուար պայմաններ։ Մինչդեռ մրցութիւնը իւր՝ արդիւնաբերութեան ծախքերի օրէնքով հետևում է նրան մշտապէս, եւ իւրաքանչիւր զէնք, որ կապիտալիստը դարբնում է իւր ոսոխի դէմ, կրկին յետ է ցցում իւր հանդէպ, աշխատում է նա մրցութիւնը մոլորեցնել երբ նա անդուլ եռանդով նոր,

աւելի թանգ, բայց եւ աւելի արժան արդիւնաբերող մեքենաներ եւ աշխատանքի բաժանումներ է մացնում հնի փոխարէն եւ երբէք չէ սպասում, մինչեւ որ մրցութիւնը նորերին հնացնէ։

Այժմ պատկերացնենք մեզ այդ տենդային շարժումը միաժամանակ ամբողջ աշխարհի վաճառականոցի վրայ, եւ հասկանալի կլինի, թէ ինչպէս կապիտալի աճման, լցացման ու կենտրոնացման հետեւանքը լինում է անընդհատ՝ ինքն իրեն խորտակող եւ միշտ աւելի հակայական առաջիճանով աշխատանքի բաժանում, նոր մեքենաների գործադրութիւն եւ հների կատարելագործում։

Սակայն ինչպէս են ազդում աշխատավարձի որոշման վրայ այս հանգամանքները, որոնք անբաժան շաղկապած են արդիւնաբեր կապիտալի աճման հետ։

Աշխատանքի մեծ բաժանումը ընդունակ է դարձնում մի բանուորի 5, 10 20 բանուորի աշխատանքը իւր վրայ ստանձնելու, ուրեմն նա զօրեղացնում է բանուորների մէջ մրցութիւնը 5, 10, 20 անգամ։ Բանուորները մրցում են միմեանց դէմ ոչ միայն նրանով, որ մէկը իրեն աւելի արժան է ծախում, քան միւսը, այլեւ նրանով, որ մի բանուոր աշխատում է 5, 10, 20 բանուորների փոխարէն. կապիտալի միջոցով առաջ եկած եւ շարունակ աճող աշխատանքի բաժանումը բռնադատում է բանուորներին այդ կերպ եւս իրար դէմ մրցելու։

Այնուհետև նոյն չափով, որով աշխատանքի բաժանումը աճում է, միեւնոյն ժամանակ յստակւում է աշխատանքը։ Բանուորի առանձին կարգի ճարպիկութիւնը դառնում է այդ դէպքում անարժէք։ Նա դառնում է մի հասարակ, միաձեւ արդիւնաբերող ոյժ, որ կարիք չունի ֆիզիկական եւ մտաւոր ոյժերը լարելու։ Նրա աշխատանքը դառնում է բոլորովին մատչելի։ Այդ պատճառով ամեն կողմից թափում են նրա վրայ մրցակիցներ։ Բացի դրանից յիշելու է այստեղ, որ որքան աշ-

խատանքը պարզ ու թեթև է սովորում, որքան քիչ կարիք ունի արդիւնաբերութեան ծախքերի՝ որպէսզի աշխատանքի հմտութիւն իւրացնի, այնքան էլ աւելի ցած է իջնում աշխատավարձը, որովհետև ինչպէս իւրաքանչիւր այլ ապրանքի գին, այնպէս էլ վարձը որոշւում է արդիւնաբերութեան ծախքերով։

Ուրեմն նոյն չափով, որով աշխատանքը դառնում է անպէտացուցիչ եւ անախորժ, ճիշտ նոյն չափով աճում է մրցութիւնը եւ նուազում աշխատավարձը։ Բանւորը ճիգ է թափում իւր աշխատավարձը պահպանել միեւնոյն բարձրութեան վրայ, ուստի նա աւելի շատ է աշխատում, կամ աւելի շատ ժամեր մաշելով, կամ միեւնոյն ժամանակում աւելի շատ հայթհայթելով։ Կարիքից դրդւած, նա դեռ աւելի է սաստկացնում աշխատանքի բաժանման անբաժելի ներգործութիւնը։ Հետեւանքը լինում է այն՝ որքան նա աւելի շատ է աշխատում, այնքան էլ քիչ վարձ է ստանում, եւ իրաւ այն պարզ պատճառով, որ նա նոյն չափով դրդւում է իւր համաշխատակիցների մրցութիւնը եւ նրանց զարձնում իւր մրցակիցները, որոնք նոյնչափ վատ պայմաններով են առաջարկում իրենց աշխատանքի ոյժը, ինչպէս նա ինքը, որ, ուրեմն, վերջ ի վերջոյ, նա ինքն է իւր համար մրցութիւն պատրաստում, ինքը՝ որպէս բանւոր դասակարգի մի անդամ։

Մեքենայական կազմը առաջ է բերում նոյն ներգործութիւնը արդիւնաբերութեան աւելի բարձր աստիճանի վրայ, որով նա փոխարինում է՝ ճապկիկ բանւորը՝ ոչ ճարպիկով, տղամարդիկ՝ կանանցով, հասուն աշխատաւորները՝ մանուկներով, որով ասում ենք, այնտեղ, ուր մեքենան մուտք է գործում, անդին քանակութեամբ ձեռագործ բանւորների գործին է տապալում, եւ այնտեղ, ուր նա զարգանում եւ բարեփոխւում է, փոխարինւում է աւելի բեղմնաւոր մեքենաներով՝ այնտեղ նետում է նա բանւորներին

դէպի փոքրիկ չեղջակոյտը։ Մենք նկարագրեցինք վերեւ ընդհանուր գծերով կապիտալիստների մէջ տեղի ունեցող ինդուստրիական կռիւը։ Այդ կռիւը ունի այն առանձնայատկութիւնը, որ յաղթանակը կատարւում է աւելի բանւորական զօրաբանակի արձակմամբ, քան աւելացմամբ։ Զօրավարները՝ կապիտալիստները, մրցում եւ գրաւ են գալիս իրար հետ՝ արդէօք ով կարող է աւելի մեծ քանակութեամբ ինդուստրիական-պիտուրներ արձակել, հեռացնել։

Անտարակոյս քաղաքատնտեսները պատմում են մեզ, որ մեքենայի միջոցով աւելորդ դարձած բանւորները իրը զբաղմունքի նոր ճիւղեր են գտնում։

Նրանք չեն համարձակւում անմիջապէս պնդելու, որ ուղիղ այն բանւորները, որոնք արձակւում են, զբաղմունք են գտնում աշխատանքի նոր ճիւղերում։ Իրողութիւնը գառնապէս բողոքում է այդ ստախօսութեան դէմ։ Նրանք խոկապէս պնդում են միայն, որ բանւոր դասակարգի այլ խաւի համար՝ օրինակ բանւորական երիտասարդ սերնդի համար — որ ինքն իրեն պատրաստ էր գտնում ինդուստրիական խորտակւող ճիւղի մէջ մտնելու — կարելի է զբաղմունքի նոր միջոցներ գտնել։ Սա, իհարկէ, ընկած բանւորների համար մեծ բաւականութիւն է։ Սրանով չի պակասում պարոն կապիտալիստների համար շահագործելու թարմ միս ու արիւն, նրանք թաղում են մեռելներին իրենց մեռելների միջոցով։ Սա մի մխիթարութիւն է, որ տալիս են բուրժուաները աւելի իրենց, քան բանւորներին։ Ո՞րքան սարսափելի հարւած կլինի կապիտալի համար, եթէ վարձու բանւորների ամբողջ դասակարգը խորտակւէ մեքենայական կազմի միջոցով, չէ՞ որ կապիտալը առանց վարձու աշխատանքի դադարում է այլեւս կապիտալ լինելուց։

Սակայն ենթադրենք, որ մեքենայի միջոցով աշխատանքի սահմանից անմիջապէս դուրս մղւածները

եւ բանւոր սերնդի մի ամբողջ մասը, որ աչք էր արնկել այդ ծառայութեան, մի նոր զբաղմունք են գտնում։ Կարելի՞ է արդեօք հաւատալ, որ դրանք նոյն կերպ կ՚վարձատրեն, ինչպէս դուրս մղւածները։ Դա կհակասէր քաղաքականութեան բոլոր օրէնքներին։ Մենք տեսանք արդէն, թէ ինչպէս արդի ինդուստրիան ձգտում է բարդ ու բարձր զբաղմունքը փոխարինել պարզ ու ստորադրեալ զբաղմունքով։

Ուրեմն ի՞նչպէս կարող է բանւորական մի ամբողջ մասսայ, որ մեքենայական կաղմի միջոցով դուրս է նետւում ինդուստրիական մի ճիւղից, մի այլ ճիւղի մէջ ապաստարան գտնել, նոյնիսկ վարձի ցածր ու վատ պայմաններով։

Որպէս բացառութիւն օրինակ են բերում այն բանւորներին, որոնք աշխատում են մեքենաների գործարաններում։ Երբ ինդուստրիայի մէջ պահանջ զգացւի եւ գործադրւի մեծ քանակութեամբ մեքենաներ, պէտք է անհրաժեշտօրէն մեքենաների թիւը աւելի աճէ, նոյն կերպ եւ մեքենաների գործարանները եւ դրանց մէջ աշխատող բանւորների զբաղմունքը պիտի շատանայ։ Իսկ ինդուստրիայի այդ ճիւղի մէջ աշխատող բանւորները ճարպիկ են եւ անդամ զարգացած։

1840 թ. սկսած կորցրել է այդ դեռ վաղուց կէս ճշմարիտ առարկութիւնը իւր ամբողջ հեռքը։ Մեքենաներ արտադրելու համար գործադրւող բազմակողմանի մեքենաները ըստ քանակի ոչ աւելի են եւ ոչ պակաս քան այն մեքենաները, որոնք գործադրւում են բամբակեայ դերձան արդիւնաբերելու համար, իսկ մեքենաների գործարաններում զբաղւող բանւորների հանդէպ՝ կանգնած են այլ կարգի գործարանների վերին աստիճանին արւեստալից մեքենաները։

Բայց դուցէ մեքենայական կաղմի միջոցով դուրս վռնդւած հասակաւոր բանւորի փոխարէն, գործարանում զբաղւում են երեք մանուկ եւ մի կին։ Չպէ՞տք է մի բանւորի վարձը բաւականութիւն տայ երեք մանուկների եւ մի կնոջ։ Չպէ՞տք է աշխատավարձի միջնիմումը բաւականութիւն տայ, որպէսզի հնարաւոր լինի բաւական պահպանել եւ աճեցնել։ Հետեւապէս ի՞նչ է ապացուցանում բուրժուական այդ սիրած ճոռոմաբանութեան եղանակը։ Ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ այն, որ այժմ չորս անդամ աւելի բանւորական կեանք է մաշւում, քան առաջ, որպէսզի հնարաւոր լինի դրանով վաստակել մի բանւորի ամբողջ ընտանիքի կեանքի կացութիւնը։

Ամփոփենք։ որքան աւելի է աճում արդիւնաբեր կապիտալը, այնքան աւելի է ընդարձակւում աշխատանքի բաժանումը եւ մեքենաների գործադրութիւնը։ Իսկ որքան աւելի է ընդարձակւում աշխատանքի բաժանումը եւ մեքենաների գործադրութիւնը, այնքան էլ սաստկանում ու ծաւալւում է բանւորների մէջ մրցութիւնը, այնքան էլ իրար է սիանում եւ նուազում նրանց վարձը։

Բանւոր դասակարգը հետզհետէ իւր մէջ է գրաւում հասարակութեան վերին խաւերը։ Հետզհետէ մղւում են դէպի բանւորական դասը փոքրիկ գործարանատէրերն ու փոքրիկ հասոյթաւորները, որոնք ուրիշ ոչինչ չեն կարող անել, բայց եթէ բազուկ բազկի տալ բանւորի հետ։ Այդպէս շարունակ խտանում, անտառի ձեւ են ընդունում թեւատարած, աշխատանք որոնող բազուկները եւ միեւնոյն ժամանակ իրենք՝ բազուկները, շարունակ մաշւում, նուազում, հիւծւում են։

Որ փոքրիկ գործարանատէրերը անկարող են առկալ ու դիմադրել կռւի մէջ, — ուր առաջին պայմաններից մէկն է՝ շարունակ բարձր աստիճանի արդիւնաբերութիւնը, այսինքն մեծ գործարանատէր լինել եւ եւ ոչ փոքրիկ, — դա ըստ ինքեան հասկանալի է։

Որ կապիտալի տոկոսը նուազում է այն չափով, ինչ

չափով որ կապիտալի քանակն է աճում կուտակւում. որ այդ պատճառով փոքրիկ հասոյթաւորը չէ կարող այլևս իւր եկամտով բաւականանալ ապրուստ հայթհայթել, հետեւապէս եւ բռնադատւած է իրեն նետելու գործարանական աշխարհը եւ դրանով խտացնելու փոքրիկ գործարանատէրերի եւ բանւորների թիկնածուների չարքերը, — այդ բոլորը կարօտ չեն որեւէ բացատրութեան

Վերջապէս այն չափով, որով կապիտալիստները, վերոյիշեալ նկարագրութեան հիման վրայ, բռնադատւած են՝ արդէն գոյութիւն ունեցող արդիւնաբերութեան հսկայական միջոցները աւելի ու աւելի բարձր աստիճանով չահագործել եւ այդ նպատակով չարժման մէջ նետել փոխառութեան (կրեդիտ) բոլոր զսպանակները, ճիշտ նոյն չափով բաղմանում են ինդուստրիական երկրաշարժերը, որոնց ընթացքում առեւտրական աշխարհը պահպանում է իւր գոյութիւնը միայն այն միջոցով, երբ նա զոհում է հարստութեան արդիւնքների եւ անգամ արդիւնաբերութեան ոյժերի մի մասը՝ ստորերկրեայ աշխարհի աստուածներին, — մի խօսքով աճում են ճգնաժամերը (Krisis)։ Նրանք դառնում են յաճախակի եւ ուժեղ կրկնւող երեւոյթեր այն պատճառով, որովհետեւ նոյն չափով, որով արդիւնքների՝ հետեւապէս եւ ընդարձակւող վաճառանոցների նկատմամբ եղած պահանջը, աճում է, այնքան էլ աւելի ու աւելի է նեղանում համաշխարհային վաճառանոցը, այնքան աւելի քիչ նոր շուկաներ են մնում չահագործութեան ասպարէզից դուրս, որովհետեւ իւրաքանչիւր նախընթաց ճգնաժամ ենթարկում է մինչեւ այդ ժամանակ չնուաճւած կամ առեւտրի մակերեւոյթօրէն չահագործւած վաճառանոց՝ համաշխարհային առեւտրի ազդեցութեան։ Բայց կապիտալը ապրում է ոչ միայն աշխատանքից։ Մի՝ միաժամանակ առաջաւոր

եւ բարբարոս պարոն իւր հետ խորխորատ է տանում իւր ստրուկների դիակները՝ ամբողջ բանւորական հեկատոմբները, որոնք ճգնաժամի ժամանակ խորտակւում են։ Այսպէս ուրեմն տեսնում ենք. աճո՛ւմ է կապիտալը արագ, ապա ուրեմն բանւորների մէջ աճում է մրցութիւնը աւելի՛ արագ, այսինքն այնքան յարաբերաբար աւելի են նւազում բանւոր դասակարգի զբաղմունքի եւ կենսական միջոցները, սակայն եւ այնպէս կապիտալի արագ աճումը կազմում է ամենանպաստաւոր պայմանը վարձու աշխատանքի համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՕՑ.-ԴԵՄ. ԲԱՆ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հայերէն լեզուով)

---

1. Ծանուցումն Ռուսաստանի Սօց.-Դեմ. Բան. Կուսակցութեան երկր. հերթ. համագումարի մասին։ Գինն է 30 սանտիմ։

2. Ծրագիր Ռուսաստանի Սօց.-Դեմ. Բան. Կուս. (ընդ. երկր. հերթ. համագումարում)։ Գինն է 20 սանտ։

3. Լ. Մարտով — Բանուորական Գործը Ռուսաստանում։ Գինն է 80 սանտիմ։

4. Կ. Մարքս եւ Ֆ. Էնգելս — Մանիֆէստ Կոմունիստական Կուսակցութեան։ Գինն է 80 սանտիմ։ Նոյնը մաքուր թղթի վրայ։ Գինն է 1 ֆր. 20 սանտ.

5. Կ. Մարքս — Վարձու Աշխատանք եւ Կապիտալ։ Գինն է 50 սանտիմ։

ՏՊԱԳՐԻՈՒՄ ԵՆ.

6. Դէպ եւ Լաֆարգ — Ի՞նչ են կամենում սոցիալ-դեմոկրատները։

7. Ֆ. Լասսալ — Սահմանադրութեան էութեան մասին։

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐԼ ԿԱՈՒՑԿՈՒ

ԷՐՖՈՒՐՏԻ ԾՐԱԳԻՐԸ

(Թարգմանութիւն գերմաներէնից)

Գերմանական Բանուորական Կուսակցութեան այժմեան ծրագիրը ընդունուած է Էրֆուրտի համագումարում 1891 թուականին։ Կաուցկու այս աշխատութիւնը — որի հայերէն հրատարակութիւնը ձեռնարկում ենք մենք — ներկայացնում է այդ համագումարում ընդունուած ծրագրի տեսական մասի բացատրութիւնը։ Որովհետեւ մի կողմից, գերմանական ծրագրի ոգու հետ համաձայն գործում է Եւրոպայի սոցիալիստական կուսակցութիւնների մեծամասնութիւնը եւ միւս կողմից, Մարքսի եւ Էնգելսի «Կոմունիստական Մանիֆէստ»-ից յետոյ, Կարլ Կաուցկու «Էրֆուրտի Ծրագիրը» («Das Erfurter Programm in seinem grundsätzlichen Theil erläutert von Karl Kautsky») ներկայացնում է սոցիալիստական գրականութեան ամենանշանաւոր աշխատութիւնը, — մենք վճռել ենք առաջարկել նրա թարգմանութիւնը հայ սոցիալիստական ինտելիգենցիային։

Մեր կողմից, մենք գիմում ենք նրանց, որոնք համակրում են այս հրատարակութեանը, փնդրելով նիւթական աջակցութիւն։

Դիմել՝

Paul Axelrod, Bd. Pont d'Arve, 4, Genève — Suisse
Для „Коммиссіи."